Ազգ
Azg
29 ԱՊՐԻԼ 2011 ՈՒՐԲԱԹ 76 (4695)
ISSN: 1829-1651

# Ստամբուլում հողին հանձնվեց ապրիլի 24-ին սպանված թուրքահայ զինծառայողը

## *Չի բացառվում, որ այս սպանությունը թուրքական ժխտողականության արձագանքը լինի*

Այս տարի ապրիլի 24-ին Ստամբուլում, Անկարայում, Բոդրումում եւ Դիարբեքիրում կազմակերպվել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ: «Ռասիզմին եւ ազգայնականությանը՝ ոչ» նախաձեռնության կազմակերպած միջոցառումների կազմակերպիչները ցեղասպանության հետ դատապարտել են նաեւ ժխտողականությունը, պահանջելով թուրքական պետությունից վերջ տալ ժխտողականությանը:

Նույն օրը Բաթմանի Կոզլաք գավառի մոտակայքում տեղակայված զորամասում զորացրվելուց 15 օր առաջ սպանվեց թուրքահայ շարքային զինծառայող Սեւակ Շահին Բալըքչըն: Հուղարկավորությունը ապրիլի 27-ին տեղի ունեցավ Կ. Պոլսո Սբ Վարդանանց եկեղեցում: Սեւակին հողին են հանձնել Շիշլիի հայկական գերեզմանոցում: Երեկ թուրքական թերթերը, նաեւ հեռուստաալիքները անդրադարձել էին թաղման արարողությանը, որին վարչապետ Էրդողանի կառավարության անունից մասնակցել է պետնախարար Էգեմեն Բաղըշը, իսկ թուրքական զինված ուժերի՝ գնդապետի կոչում ունեցող 30 զինծառայող: Արարողությունը հանդիսապետել է Պոլսո հայոց պատրիարքի տեղապահ Արամ արք. Աթեշյանը, միաժամանակ ներկա է եղել հանգուցյալ Հրանտ Դինքի այրին՝ Ռաքել Դինքը:

Թեեւ ծառայության վայրից Սեւակի ծնողներին տեղեկացրել էին, որ նա սպանվել է պատահական գնդակից, սակայն հուղարկավորության օրը նրա սգակիր մայրը, «Բիանեթ» կայքէջի վկայությամբ, հայտարարել է. «Չեմ հավատում, որ իմ որդին ապրիլի 24-ին սպանված լինի պատահական գնդակից»: Պատահական գնդակի վարկածին չեն հավատում նաեւ Սեւակի նշանածը՝ Մելանին, եւ նրա մայրը՝ Հռիփսիմե Հակոբյանը:

Համենայն դեպս ապրիլի 26-ին տիկին Հռիփսիմեն զանգահարել է «Այդընլըք» թերթի հեղինակ Մեհմեդ Ֆարաչին եւ ասել. «Մեր փեսային սպանեցին»: Այնուհետեւ նույն բանը կրկնել է Մելանին, միաժամանակ պատմելով, թե անցյալ ամիս զորամասի հրամանատարը ինչպես է ծեծել իր նշանածին, որին այնուհետեւ սպառնացել են՝ կվառենք քեզ:



Անկախ Սեւակի հարազատների կասկածներից, առ այսօր չի հրապարակվել սպանության դատաբժշկական փորձաքննությունը, ոչ էլ հայտնում են պատահական կրակոց արձակող զինծառայողի անունը, որն իբր Սեւակի ընկերն է, եւ նա կրակոցն արձակել է թյուրիմացաբար, ընկերոջ հետ կատակելիս:

Ապրիլի 24-ը խորհրդանշում է Հայոց ցեղասպանությունը: Չի բացառվում, որ թուրքահայ զինծառայողի հենց ապրիլի 24-ին կատարված առեղծվածային սպանությունն էլ թուրքական պետության յուրատեսակ ազդանշանը լինի հայերին եւ խորհրդանշի Թուրքիայի ժխտողականությունը:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Տեր-Պետրոսյան. «Երկխոսության դուռը եթե ոչ լրիվ բաց, ապա առնվազն կիսաբաց է»



ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կատարվե՞լ են արդյոք վերջին հանրահավաքում Տեր-Պետրոսյանի հնչեցրած երեք պահանջները: Սկզբունքորեն ա՛յս հարցի պատասխանը պետք է հնչեցներ ՀԱԿ առաջնորդը մեկ օր առաջ նախագահ Սարգսյանի վերջին մեսիջից հետո երեկվա հանրահավաքում.«Կարծում եմ, հասկանալի է, որ սույն հանրահավաքի արտոնված լինելու հանգամանքը միանշանակորեն ցույց է տալիս, որ այլեւս վերականգնված է Ազատության հրապարակում հավաքներ անցկացնելու՝ քաղաքացիների երեք տարուց ի վեր ոտնահարված իրավունքը, եւ իշխանությունը վերջնականապես հրաժարվել է այս հրապարակը քաղաքական միջոցառումների համար արգելված տարածքների շարքը դասելու մտադրությունից, ինչն, ի դեպ, հաստատվում է նաեւ Սերժ Սարգսյանի երեկվա հարցազրույցով», ասաց նա՝ մարտի մեկի լիակատար բացահայտման անհրաժեշտության վերաբերյալ նախագահ Սարգսյանի ապրիլքսանի հայտարարությունը եւս իրավապահ մարմիններին իջեցված ուղղակի ցուցում-հանձնարարական համարելով. «Ինչ վերաբերում է երրորդ՝ քաղբանտարկյալների ազատ արձակման պահանջին, ապա ժամկետային կամ ֆորմալ առումով այն կատարված չէ», ասաց, ապա եւ մեկնաբանեց Սերժ Սարգսյանի մեկ օր առաջվա հարցազրույցի գաղտնիմաստները՝ ի վերջո եզրակացնելով, որ այնտեղ Հանրապետության օրվա հիշատակումը, լիցքաթափման քայլերի մասին ասված խոսքերը եւ Արդարադատության նախարարին տրված հանձնարարականի վերաբերյալ տեղեկությունը կասկածի տեղ չեն թողնում, որ իշխանությունը, միանգամայն անթաքույց ակնարկումներով, որոշել է քաղբանտարկյալների ազատ արձակման հարցը լուծել մայիսի 28-ի տոնի կապակցությամբ. «Հետեւաբար, ըստ էության, մեր պահանջներից երկուսը կատարված են լրիվին, իսկ մեկը՝ կիսով չափ, այն էլ ոչ թե բովանդակության, այլ միայն ժամկետի առումով:

*Տես էջ 2*

# Իրանը Հայաստանի երկաթուղին միացնելու է միջազգային ջրերին

Ինչպես տեղեկացնում է իրանական «Մեհր» լրատվական գործակալությունը, Իրանի ճանապարհների եւ տրանսպորտի նախարար Ռեզա Փիլփայեն հայտարարել է, որ Թեհրանը ցանկանում է Հայաստանից եկող կառուցվելիք երկաթուղային ցանցը Իրանի տարածքով հասցնել մինչեւ միջազգային ջրեր: Փիլփայեն կոնկրետ նշել է, որ Հայաստանի երկաթուղային ցանցը միջազգային ջրերին կմիանա իրանական Բենդեր-Աբբաս նավահանգստի միջոցով: Նախարարը նշել է, որ նախագծվող Հայաստան-Իրան երկաթգիծը կունենա ընդհանուր 540 կմ երկարություն, որից 480 կմ-ն Հայաստանի տարածքով կանցնի, 60-ը՝ Իրանի: Փիլփային անդրադարձել է նաեւ Հայաստանում ավտոճանապարհ կառուցելու ծրագրին, ընդգծելով, որ այն «կունենա 624 կմ երկարություն եւ կկապի Իրանը Հայաստանով Վրաստանի հետ»: Նախարարը վստահեցրել է, որ «իրանական ընկերությունները պատրաստ են մասնակցելու Հայաստանում ավտոճանապարհի կառուցման աշխատանքներին»:

Հ. Ա.

## ՀԱՄԱՌՈՏ

# ԱՄՆ փոխպետքարտուղարը հանդիպել է Մինսկի խմբի համանախագահներին

Քաղաքական հարցերով ԱՄՆ փոխպետքարտուղար Ուիլյամ Բըրնսը ապրիլի 27-ին հանդիպել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Բեռնար Ֆասիեի, Իգոր Պոպովի, Ռոբերտ Բրադկեի, ինչպես նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին: ԱՄՆ պետքարտուղարության լրատվական ծառայությունից տեղեկանում ենք, որ քննարկել են Ղարաբաղյան հիմնախնդրի բանակցությունների շրջանակներում իրականացված վերջին ժամանակների ու առաջիկայում սպասվող գործողությունները: ԱՄՆ փոխպետքարտուղարը վերահաստատել է Միացյալ Նահանգների պատրաստակամությունը կողմերին օգնելու՝ հակամարտության երկարատեւ ու խաղաղ լուծման հասնելու համար:

Հ. Ա.

# Հովիկ Աբրահամյանը հանձնարարել է անհարգելի բացակայող պատգամավորների աշխատավարձը կտրել

ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի «Facebook»-ի էջից իմանում ենք, որ նա խիստ բացասաբար է վերաբերվում պատգամավորների անհարգելի բացակայություններին նիստերից եւ հանձնարարել է անհարգելի բացակայած պատգամավորների աշխատավարձից բացակայած յուրաքանչյուր օրվա համար պահումներ կատարել. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործող խորհրդարանը պրոֆեսիոնալ է, յուրաքանչյուր պատգամավոր պետք է գիտակցի, որ ժողովրդի կողմից ընտրվել է օրենսդիր աշխատանք իրականացնելու համար եւ վերջինս նրա հիմնական աշխատանքն է: Իհարկե, չեմ բացառում, որ բացակայությունները ունենան հարգելի պատճառ, եւ այս առումով պատգամավորների բացակայությունները, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանված կարգով, կարող են ճանաչվել հարգելի: Չմոռանանք, որ խորհրդարանը պրոֆեսիոնալ դարձել է 1999 թվականից, եւ նմանատիպ խնդիրները բնականոն բնույթ կրում են ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ տարբեր երկրների խորհրդարանների համար: Սակայն, անշուշտ, վերջին հաշվով պատգամավորի գործունեության վերջնական գնահատականը տալիս է ընտրողը», գրել է ԱԺ նախագահը «Facebook»-ի իր էջում :

Մ. Խ.

# «Գրանդ սպորտ» մարզահամալիրը բացեց հյուրընկալ դռները

## *ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցեց բացման արարողությանը*

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մայրաքաղաքի մարզակառույցների թիվն ավելացավ եւս մեկ ինքնատիպ մարզահամալիրով: Երեկ Շենգավիթ համայնքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ տեղի ունեցավ «Գրանդ սպորտ» մարզաառողջարարական եւ մարզաուսումնական համալիրի բացման հանդիսավոր արարողությունը: Դա հայտնի գործարար, «Գրանդ հոլդինգի» նախագահ Հրանտ Վարդանյանի որդու՝ Միքայելի հերթական նախաձեռնության իրագործումն էր, որի նպատակը բնակչության առողջ ապրելակերպի, հանգստի եւ ժամանցի ճիշտ կազմակերպման համար եւս մեկ հնարավորություն ստեղծելն է:

Հանրապետության նախագահը շրջել է «Գրանդ հոլդինգ» ձեռնարկությունների խմբի մաս կազմող մարզահամալիրում, ծանոթացել է պայմաններին: Նշվել է, որ «Գրանդ սպորտի» բոլոր մարզադահլիճները կառուցված են միջազգային չափանիշներին համապատասխան, մարզահամալիրում աշխատում են միջազգային որակավորում ունեցող մարզիչներ:



Մարզահամալիրը զբաղեցնում է մոտ 7 հազար ք.մ. տարածք, որից 3200 ք.մ. զբաղեցնում է եռահարկ շինությունը: Բակում կառուցված են ամառային վոլեյբոլի խաղահրապարակ եւ մեծ թենիսի կորտեր, կա ավտոկայանատեղի, իսկ մոտ 600 ք.մ.-ը կանաչ տարածություն է, որտեղ կարելի է զբոսնել ու հանգստանալ մարզումներից ու պարապմունքներից հետո: Այս մարզահամալիրը փաստորեն Շենգավիթ եւ Էրեբունի համայնքների մարզաառողջարարական եւ մարզաուսումնական միակ եւ առաջին մեծածավալ համալիրն է: Ուստի հենց այդ պատճառով էլ «Գրանդ հոլդինգի» ղեկավարն ընտրել է այս համայնքը: Մարզահամալիրի շինարարության վրա մոտ 7 մլն դոլարի ներդրում է կատարվել:

*Տես էջ 7*

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

# «Վախը չի փրկի դրությունը. 1915-ը որպես ցեղասպանություն է բնութագրում ողջ աշխարհը»

***Ապրիլի 24-ին, ինչպես որ ենթադրվում էր, նախագահ Բարաք Օբաման վերստին չարտասանեց «ցեղասպանություն» բառը: «Ինչ արած, դա էլ,- ինչպես «Էվրենսելլի» ապրիլի 26-ի համարում գրում է թուրք մտավորական Ռագըփ Զարաքոլուն,- Օբամայի ամոթն է... Ով գիտի՝ այդ մեկ բառի համար քանի պետպատվեր ենք հանձնել ամերիկյան կողմին, քանի հատ զենքի գնման համաձայնագիր ենք ստորագրել»: Սակայն ելույթում «ցեղասպանություն» բառի օգտագործումից Օբամայի խուսափելը չխանգարեց, որ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն նորից դժգոհությամբ արձագանքի:***

***Ի դեպ, Դավութօղլուին էլ անուղղակիորեն ապրիլի 25-ի համարում արձագանքել էր «Վաթանը»: Առաջին հայացքից ժամանակավրեպ թվացող այս արձագանքը չափազանց հետաքրքրական է, մասնակի կրճատումներով ուշադրության ենք ներկայացնում.***

«Ապրիլի 24-ի պատճառած ամենամյա սարսափը շարունակվելու է: Թեեւ ԱՄՆ նախագահը խուսափեց «ցեղասպանություն» բառի օգտագործումից, դրանով էլ Անկարան մեկ անգամ եւս ուրախացավ, սակայն Մեծ եղեռնը ամրագրվել է որպես 1915-ի հայերի տեղահանությունը բնութագրող արտահայտություն:

Հայկական հարցին Անկարայի պաշտոնական մոտեցումը նպատակադրված էր թշնամանք սերմանելու միջոցով թուրք ժողովրդի խաբեությանը: Այդ նպատակով նույնիսկ օգտագործվել են «նրանք ավելի շատ են սպանել» կարգի ափեղ-ցփեղ արտահայտություններ: Ոչ բոլորը գիտեն, թե ինչ է կատարվել 1915-ին, սակայն իմանալը դժվար չէ: Դրա համար կարելի է սերտել Թալեաթ փաշայի թղթապանակը: Այլեւս անհնար է դասարկ թշնամանքով փրկել դրությունը: Իհարկե, «ցեղասպանությունը» ծանր բառ է, թերեւս կարելի է հասկանալ դրանից բխող վախը, սակայն վախենալով անհնար է փոխել իրերի դրությունը, քանի որ 1915-ի իրադարձությունը իբրեւ ցեղասպանություն ողջ աշխարհն է բնութագրում:

Հունաստանի հետ հարաբերությունների կարգավորման համար Թուրքիան, օրինակ, չի սպասել, որ լուծվի Կիպրոսի հիմնախնդիրը: Հետեւաբար Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը Ղարաբաղի հիմնահարցով պայմանավորելը խելամիտ մոտեցում չէ: Անկարան Հայաստանի հետ հարաբերությունները աշխուժացնելու համար «հարեւանների հետ խնդիրների զրոյականացման» շրջանակում պետք է նոր ձեռնարկումներ իրականացնի: Կարծում ենք՝ ամեն տարի ապրիլի 24-ին ահ ու սարսափի մեջ սպասելու փոխարեն, թե աշխարհը ի՞նչ կասի կամ ելույթում ո՞ր բառը կօգտագործի ԱՄՆ ղեկավարը, պետք է մտածել դարեր շարունակ գոյակցած հասարակությունների բարեկամությունը վերականգնելու ուղղությամբ, որի ճանապարհը բաց է»:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Ծիծեռնակաբերդի ծաղկահավաքը

*27 ապրիլ*

Անցյալ տարի առաջին անգամ ՀՀ վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը ապրիլի 24-ի անմեղ զոհերի հիշատակի ծաղիկների հավաքման եւ հետագա կիրառման այլընտրանքային, օգտակար, բնապահպանական եւ խորհրդանշական տարբերակ առաջարկեց եւ իրագործեց ապրիլի 27-ին, որի այս տարվա կրկնությունը սկիզբ առնող գեղեցիկ ավանդության վկայություն է:

Ուշադրությունս գրավեց հիմնադրամի տնօրեն **Ռուբեն Խաչատրյանի** այն խոսքը, թե պետք է իմանալ ոչ միայն ծաղիկ դնել, այլեւ՝ տանել:

Հազիվ թե որեւէ մեկն այդ օրը Ծիծեռնակաբերդ բարձրանա առանց ծաղիկների, որ մարդկային հոգու անբաժանելի մի մաս է եւ անհրաժեշտ մաս: Հարյուր հազարավորներ անցնում են կրակի կողքով, այնտեղ թողնում իրենց ապրումի ու զգացումի մի գույն, մի հետք, մի ծաղիկ: Ու երբ հեռանում են ամենքը, եւ մութը իջնում է ու ծածկում լույս ու ստվեր, հուշահամալիրի ներսի կրակը բոցկլտում ու ասես ձայնակցում է բոլորակված ծաղիկների այն լռությունզգացմունքին, որ իրենց է փոխանցել մեզնից յուրաքանչյուրը:

Ու լավ չէ, երբ հիշողության այս գեղեցկագույն պատկերը ամենասովորական ու առօրեական միջամտությամբ աղավաղվում-քանդվում է օրեր անց, երբ ծաղիկները թոշնում, խամրում են: Ռուբեն Խաչատրյանը անցած տարի պատմում էր, թե որքան ազդեցիկ էր՝ հիշատակի խորհրդանիշ-ծաղիկները եղաններով հավաքելու եւ որպես աղբ հուշահամալիրից դուրս տանելու՝ օտար մի քանի լրատվամիջոցների տեսանյութը: Եվ ահա ծնվում է ծաղիկներին այլընտրանքային վերաբերմունքի գաղափարը եւ առաջարկվում ծրագիրը՝ բնույթով բարոյական-մարդասիրական եւ բնապահպանական՝ նշանակությամբ: Ծրագրի հաջողությունը նախ եւ առաջ պայմանավորված է հեղինակների գաղափարական համոզվածությամբ եւ մասնակիցների ճիշտ վերաբերմունքով, ինչը այս ընթացիկ տասը տարիներին ջանադրաբար ներարկվել է երիտասարդներին՝ «Արեւորդի» էկո-ակումբների տեսական եւ պրակտիկ աշխատանքներով: Ծրագրի իրագործմանը նպաստող կարեւոր հանգամանքը աշխատանքի ճիշտ եւ կանոնավոր կազմակերպումն է: «Արեւորդի» էկո-ակումբների սաների հետ այս տարվա Ծիծեռնակաբերդի ծաղկահավաքին մասնակցեցին «Վիվասել ՄՏՍ»-ի աշխատակիցներ, ուսանողներ Երեւանի պետհամալսարանից եւ Հայաստանի ամերիկյան համալսարանից, Սայաթ-Նովայի անվ. երաժշտական դպրոցից, «Մակադամյան» հայ-կանադական ընկերությունից, «Հազարամյակի մարտահրավեր Հայաստան» կազմակերպությունից: Այս տարի նաեւ պաշտոնական բացում կատարվեց՝ մասնակցությամբ «Արեւորդի» էկո-ակումբի, «Հայաստանի ազգային սկաուտական շարժում» կազմակերպության եւ «Փոքր Միհր» կրթահամալիրի սաների մասնակցությամբ: Առավոտյան սկսված ծաղկահավաքը ավարտվեց ուշ երեկոյան: Ծաղիկները խնամքով հավաքվեցին, եւ հուշահամալիրի ետնամասում տեղադրված առանձին սեղանիկների մոտ կանգնածները հատ-հատ անջատեցին ցողուններն ու գլխիկները՝ տեսակավորելով ըստ կիրառման: Ցողուններից պատրաստվող պարարտախառնուրդը օգտագործվելու է հուշահամալիրի այգու հողամշակման աշխատանքներում: Ծաղկաթերթերը փռում էին ճերմակ պաստառներին՝ երկար տարածվող համալիրի մերձ հատվածում: Չորացնելուց հետո այդ թերթիկներն օգտագործվելու են թղթի վերամշակման մեջ, արեւորդիների ձեռքով պատրաստած բացիկների, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հուշագրերի, շնորհակալագրերի ու հրավիրատոմսերի համար: Այս տարվա հիմնադրամի հրավիրատոմսերից մեկն, օրինակ, շատ առանձնահատուկ է. վերամշակված թուղթ-հրավիրատոմսը ինքն իրենով նաեւ ծաղկասերմի պարունակ է, որը կարելի է ցանել:



Ծաղկահավաքը ՀՀ վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի գաղափարական դրսեւորումներից մեկն է՝ ուղղված հանրային բնապահպանական գիտակցության զարգացմանը, որպես ակցիա, ձեւի մեջ գեղեցիկ, բովանդակությամբ՝ օգտակար եւ դաստիարակչական: Ծիծեռնակաբերդի ողջ տարածքը ասես ծաղկահովտի վերածված, հուշահամալիրը գույների ու բուրմունքի թարմության մեջ ներսուզված, փոխվում էր զգացողություններ, տրամադրություններ:

Նախագիծը իրականացրեց Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը իր գլխավոր գործընկեր «Վիվասել-ՄՏՍ» ընկերության եւ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ համատեղ:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

# Լիբանանի հայ գործարարներու համախմբումը կը մասնակցի «Հայ առեւտրական ցանց»-ի խորհրդաժողովին

**Շարունակելով իր անմիջական ներդրումը բերել ինչպէս Լիբանանի եւ Հայաստանի, այնպէս ալ սփիւռքի եւ մայր հայրենիքի միջեւ գործարար եւ առեւտրական աշխոյժ կապերու զարգացման ու համագործակցութեան ամրապնդման՝ Լիբանանի հայ գործարարներու համախմբման պատուիրակութիւնը կը մասնակցի ապրիլի 29-30-ին ՀՀ Սփիւռքի նախարարութեան կազմակերպած «Հայ առեւտրական ցանց» խորհրդաժողովին: Լիբանանահայ պատուիրակութիւնը կը բաղկանայ համախմբման նախագահ Նազարէթ Սապունճեանէ, Ռոպեր Տիգրան Ափրաւէ եւ Ռաֆֆի Սեմերճեանէ՝ որպէս տնօրէններու խորհրդի անդամներ:**

**Խորհրդաժողովի բացման հանդիսութիւնն ու աշխատանքները տեղի պիտի ունենան Հայաստանի առեւտուրի եւ արդիւնաբերութեան պալատին մէջ՝ մասնակցութեամբ Հայաստանէն եւ Սփիւռքէն պատուիրակներու: Բացման խօսքով հանդէս պիտի գան Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան եւ վարչապետ Տիգրան Սարգսեան, Կանադա-Հայաստան գործարար խորհուրդի նախագահ Վահրամ Փիրջանեան: Տեղի պիտի ունենան համանախագահի ընտրութիւն (Սփիւռքի ներկայացուցիչ), ինչպէս նաեւ վերլուծական ելոյթներ Նիք Յակոբեանի (ԱՄՆ), Վահրամ Փիրջանեանի, Արսէն Ղազարեանի, Մարտին Սարգսեանի ու Հրաչ Գասպարի կողմէ: Ելոյթներուն նիւթերը պիտի շօշափեն կամուրջներու կառուցումը հայ առեւտրական ցանցերու միջեւ, Հայաստանի արդիւնաբերութեան օժանդակութիւն, ռազմավարական ծրագրաւորում, համատեղ ֆորումներու կազմակերպում եւ այլ հարցեր: Համագումարի աւարտին պիտի հրապարակուի Հ. Ա. Ց.-ի յայտարարութիւնը:**

Հ. ՄՈՍԿՈՓԵԱՆ
Պէյրութ-Երեւան

# Տեր-Պետրոսյան. «Երկխոսության դուռը...»

*1-ին էջից*

**Դա նշանակում է, որ երկխոսության հնարավորությունն առայժմ սպառված չի կարելի համարել, ուստի եւ առայժմ հիմք չկա փոխելու մեր մարտավարությունն ու գործողությունների բնույթը: Պատկերավոր ասած՝ երկխոսության դուռը եթե ոչ լրիվ բաց, ապա առնվազն կիսաբաց է: Ես ոչ մի կասկած չունեմ, որ այն լրիվ բացվելու է մեկ ամսվա ընթացքում, ինչը մենք կարձանագրենք մայիսի 31-ին կայանալիք մեր հաջորդ հանրահավաքում, երբ այս հարթակից ձեզ իրենց երախտագիտության խոսքը կասեն Նիկոլ Փաշինյանը եւ Սասուն Միքայելյանը: Երեք տարի համբերել ենք, մեկ ամիս էլ կհամբերենք», ասաց նա՝ վստահություն հայտնելով, որ Նիկոլն ու Սասունը կհասկանան, որ մեկամսյա ուշացումն այն սկզբունքային հարցը չէ, որի համար արժե փչացնել Հայաստանի քաղաքական մթնոլորտի առողջացմանն ուղղված եւ արդեն իսկ հաջողություններ արձանագրած լրջագույն գործը:**

**Ահա այն հիմնական ուղերձը, որին սպասում էին հանրահավաքի եկած մարդիկ, եւ որը, չի կարելի ասել՝ բավարարեց բոլորին, որովհետեւ Տեր-Պետրոսյանի խոսքի այս ավարտին նրա համախոհների ողջույններին միանում էին նաեւ հավանություն չտալու սուլոցներ, իսկ ինձ մոտիկ կանգնած գյումրեցիների մի խումբ բարձրաձայն դժգոհում էր.«Բլեֆ կենե, սոցիալական խնդիրներից խոսի, ինչքան համբերենք»: Բացի այդ՝ Տեր-Պետրոսյանի ելույթը ստեպ-ստեպ ողջունելով՝ նրա կողմնակիցներից շատերը չէին դադարում վանկարկել՝ «հիմա-հիմա», չնայած Տեր-Պետրոսյանը, ավելի վաղ թվելով այն խնդիրները, որոնք պետք է լուծվեն, ասել էր. «Այդ խնդիրները մենք ենք լուծելու դրության թելադրած երկու ճանապարհներից մեկով՝ կա՛մ երկխոսությամբ ու ազգային համերաշխության կայացմամբ, կա՛մ էլ՝ ֆիզիկական առճակատմամբ, որի անկանխատեսելի հետեւանքները աղետաբեր կարող են լինել ժողովրդի ու երկրի համար: Մենք նախընտրում ենք առաջին ճանապարհը եւ վստահ ենք, որ հասարակության գերակշիռ մեծամասնությունը նույնպես միանշանակորեն կողմնակից է այդ ճանապարհի»: Նա նաեւ հասցրեց ծաղրել մի ական-ավոր (իր բաժանումն է) գործչի, որը մեկ օր առաջ խոսել էր ՀԱԿ-ի արած հաշվարկների եւ իշխանություններին նվազագույն եւ իրականանալի պահանջներ ներկայացնելու մասին. «Օգտվելով մոդայիկ շախմատային եզրաբանությունից՝ եթե երեք պահանջ ներկայացնելով, մենք իշխանությանը շախ էինք հայտարարել, ապա վերջինիս համար ի՞նչ դժվար էր շախից դուրս գալ եւ, կատարելով մեր մտքով չանցնող մի չորրորդ պահանջ, մեզ մաս աներ. ասենք, ձերբակալեր ու Հաագայի դատարան հանձներ Քոչարյանին»: Հուշենք, որ խոսքը Վահան Հովհաննիսյանի մասին է, իսկ ՀԱԿ առաջնորդի այս անդրադարձն խոսում է այն մասին, որ նա, այնուամենայնիվ, չափից դուրս վախենում է իր էլեկտորատը կորցնելուց կամ ուրիշին զիջելուց, ինչը լրիվ հնարավոր է այս նոր իրավիճակում: Տեր-Պետրոսյանի ելույթն ամբողջությամբ տես «Ազգ-օնլայնում»:**

**Սակայն հանրահավաքի հարթակից մյուս խոսողները մի քիչ տարբեր, կարծես նոր իրավիճակին հարմարվող շեշտադրությամբ էին խոսում. Լեւոն Զուրաբյանն ասում էր, թե ժողովուրդը գործոն է դարձել, օրակարգ է թելադրում եւ դառնում է իր բախտի տերը՝ հանձին ՀԱԿ-ի, նրա պահանջների հետ հաշվի են նստում, Հրանտ Բագրատյանը տնտեսության վատ վիճակի ու ժողովրդի աղքատացման հարցը լուծող էլի մի ելք էր տեսնում միայն՝ իշխանափոխությունը, Արամ Զ. Սարգսյանը չնայած իր ելույթի էմոցիոնալ հատվածի՝ տոնը պահեց ու մեջբերեց Վազգեն Սարգսյանին, թե Վազգենը ասում էր՝ կան հարցեր, որոնք ազգովին են լուծվում, եւ առանձին լուծելով կորուստներ կունենանք: Ստեփան Դեմիրճյանի ձայնն էր խզված՝ բոլորովին չխոսեց: Իսկ ամենասկզբում հանրահավաքը բացած Արամ Մանուկյանն ուրախանում էր, թե Ազատության հրապարակը վերջապես վերադարձվեց իր օրինական տիրոջը: Ասենք, որ հանրահավաքի մասնակիցներն ավելի քիչ էին, քան անցած անգամ, երկու արձանների միջակայքն էին լավ լցրել՝ գումարած խոտերի վրա պառկած արեւածաղիկ չրթողները: Աչքի էր զարնում նախկին պաշտոնյաների առատությունը, ի տարբերություն նախորդ հանրահավաքների, երեւում է՝ առարկայական սպասումներ ունեցողները քիչ չեն: Հանրահավաքն ավարտվեց երթով:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

# Տարեվերջին հնարավոր է ներկայիս գնաճի կեսին մոտ գնաճ

## *Նման տեսակետ հայտնեց ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը*

Հայաստանի նախագահ **Սերժ Սարգսյանը** երեկ Կենտրոնական բանկում հանդիպում ունեցավ բանկային համակարգի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվեցին գնաճի, երկրի ֆինանսական կայունության եւ մակրոտնտեսական իրավիճակի խնդիրները: Դրանց մասին լրագրողներին պատմեցին հանդիպման մասնակիցները:

Հայաստանի բանկերի միության նախագահ եւ «Արարատբանկի» վարչության նախագահ **Աշոտ Օսիպյանը** նշեց, որ քննարկված հարցերի թվում են եղել նաեւ օրենսդրական փոփոխությունները՝ կապված դատական համակարգի, հարկադիր կատարման ծառայության եւ սնանկացման հետ, որոնք հնարավորություն կստեղծեն բարձրացնելու վարկունակության մակարդակը: Հայաստանի բանկերի միության նախագահը հայտնեց, որ ինչպես գյուղատնտեսության վարկավորման ծրագրի դեպքում, ապագայում հնարավոր են նման ծրագրեր արդյունաբերության համար: Նախագահի հետ քննարկել են մակրոտնտեսական կայունության ապահովման ուղիները դրամավարկային քաղաքականության եւ կառուցվածքային բարեփոխումների միջոցով: Ըստ Աշոտ Օսիպյանի, երկարաժամկետ ապագայի համար կարեւորվել են կառուցվածքային բարեփոխումները: Նա նաեւ նշեց, որ ներկայումս մրցակցության մակարդակը բանկային համակարգում բարձր է, 2010-ին վարկերի տոկոսադրույքները իջել են 2-3 տոկոսով:

«Անելիք» բանկի վարչության նախագահ **Սամվել Ճզմաչյանի** խոսքով, բանկիրները գոհ են նախագահի հետ հանդիպումից: Նա տեղեկացրեց, որ այս տարվա առաջին եռամսյակում վարկավորման ծավալների մեծ աճ է գրանցվել՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ 14-15 տոկոսով:

Գյուղատնտեսության վարկավորման ծրագրերի մասին առավել մանրամասն խոսեց «ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ» բանկի վարչության նախագահ **Ստեփան Գիշյանը**: Նրա հաղորդած տեղեկատվության համաձայն, այս տարվա ապրիլի 1-ից գյուղացիներին՝ 3450 ընտանիքների տրամադրվել է 2,1 մլրդ դրամ վարկ: Դրանք տրամադրվել են 14 տոկոսով, որից 4 տոկոսը սուբսիդավորել է պետությունը, իսկ գյուղացիներին դրանք հասնում են 10 տոկոսով: Որոշ բարձրլեռնային եւ սահմանային համայնքներում պետությունն իր վրա է վերցնում 6 տոկոսի սուբսիդավորումը, եւ գյուղացիներին վարկերը հասնում են 8 տոկոսով: Վարկերը տրամադրվում են դրամով: Ստեփան Գիշյանի դիտարկմամբ, վարկերը մեծ պահանջարկ ունեն, եւ բանկի մասնաճյուղերը ստիպված են լինում աշխատել նաեւ շաբաթ օրերին: Վարկերի միջին չափը կազմում է 600 հազար դրամ: Բարձր է դրանց վերադարձելիությունը՝ ավելի քան 99 տոկոս: Ստեփան Գիշյանը կարծիք հայտնեց նաեւ, որ ծավալների ավելացման հետ վարկերի տոկոսները իջնելու միտում ունեն:

Կենտրոնական բանկի նախագահ **Արթուր Ջավադյանն** անդրադարձավ գնաճի խնդրին, ասելով, որ միջազգային գների կոնյունկտուրայով եւ գյուղատնտեսության մեջ գների որոշ նվազման հետեւանքով տարեվերջին հնարավոր է, որ ունենանք ներկայիս գնաճի կեսին մոտ գնաճ: Ի դեպ, գնաճի զսպման հարցում Կենտրոնական բանկի հասցեին «էպիտետներով» հանդես եկած մարդուն (հավանաբար նախօրեին մամուլի ասուլիսով հանդես եկած Հրանտ Բագրատյանին) Արթուր Ջավադյանն անվանեց «պրոֆեսիոնալ կլիմաքս ապրող», ավելացնելով, որ նրանից պահանջելու են ներողություն խնդրել, այլապես պատրաստ են գնալ դատարան:

«Նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությունը, որ դրամը պետք է դանդաղ արժեզրկվի, նշանակո՞ւմ է, որ ԿԲ քաղաքականությունը փոփոխություն է կրել» հարցին Արթուր Ջավադյանը պատասխանեց, որ նախագահի ասածը երկարաժամկետ մակարդակի մասին էր, բայց կան սեզոնային գործոններ, օրինակ՝ գյուղմթերքների, արտերկրից փոխանցումների հետ կապված, երբ դրամը արժեւորվում է: Ըստ ԿԲ նախագահի, Կենտրոնական բանկը հավատարիմ է «լողացող փոխարժեքի» քաղաքականությանը եւ միջամտելու է միայն կտրուկ տատանման դեպքում: «Նախագահի հայտարարությունը հասարակության կողմից ընկալվել է որպես ազգային արժույթի թուլացման քաղաքականություն, ինչը ուժեղացնում է դոլարայնացման մակարդակը: Դա չի՞ մտահոգում ԿԲ-ին», «**Ազգի**» այս հարցին Արթուր Ջավադյանը պատասխանեց, որ նախագահի հայտարարությունը չի նշանակում, որ Կենտրոնական բանկը ազգային արժույթի թուլացման քաղաքականություն է վարում, իսկ դոլարայնացման դեմ պայքարը տարվում է:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# «Իդեալ համակարգն» ընդլայնում է աշխարհագրությունը. նորաբաց խանութ-սրահ Աբովյան քաղաքում

«Իդեալ համակարգ»-ի խանութ-սրահների առաջարկած ավելի քան 30.000 անուն ապրանքատեսակից եւ 100 բարձրակարգ ծառայություններից օգտվելու համար այսուհետեւ Կոտայքի մարզի բնակիչները ստիպված չեն լինի այցելել մայրաքաղաք՝ անհրաժեշտ գնումներ կատարելու համար: Աբովյան քաղաքի Հացիսի փողոց 1/52 հասցեում գտնվող եռահարկ նորաբաց խանութ-սրահում հաճախորդը կգտնի հարմարավետ, ճաշակով եւ գեղեցիկ ինտերիեր ստեղծելու համար նախատեսված ամեն ինչ՝ ջեռուցման համակարգեր, ներկեր, դռներ, պաստառներ, ջահեր, լոգասենյակային կահույք եւ այլն: Հանդիսանալով շինարարական ապրանքների արտադրության եւ վաճառքի խանութ-սրահների ամենամեծ ցանցը տարածաշրջանում, «Իդեալ համակարգը», հավատարիմ մնալով որդեգրած քաղաքականությանը, շարունակում առանձնանում է նոր եւ որակյալ ապրանքատեսականիով ու ծառայություններով՝ ապահովելով հարմարավետության եւ հասանելիության ժամանակակից չափանիշներ: «Իդեալ համակարգում» վաղուց գտել են բազմաթիվ տարբերակներ, որոնք օգնում են հաճախորդին՝ վերանորոգումը դարձնել հաճելի գործընթաց:




«Իմեքս գրուպ» ընկերության նախագահ **Նորայր Խաչատրյանը** Աբովյան քաղաքում «Իդեալ համակարգ»-ի խանութ-սրահի բացման արարողության ժամանակ փաստեց, որ ընկերությունն արդեն մեկ տարի որդեգրել է հաճախորդներին ավելի մոտենալու սկզբունք: «Այդ ռազմավարությունից ելնելով՝ «Իդեալ համակարգի» խանութ-սրահներ են գործում Շիրակի, Արմավիրի, Լոռու, Գեղարքունիքի եւ Կոտայքի մարզերում: Նպատակն է՝ կարճ ժամանակահատվածում հանրապետության բոլոր մարզերում ներկայացնել «Իդեալ համակարգ» խանութ-սրահների տեսականին:

Նորայր Խաչատրյանը հավելում է, որ մարզերում բացված խանութ-սրահներում գնային քաղաքականությունը, զեղչային համակարգն ու տեսականին չեն տարբերվում երեւանյան սրահներից: Բացի դրանից, մարզերի բնակիչները հարկ չունենն մտածելու ձեռք բերված ապրանքների տեղափոխման խնդրի մասին, կազմակերպությունը հոգացել է նաեւ դա՝ կազմակերպելով անվճար առաքում դեպի մարզեր:

«Իմեքս գրուպը» ցուցաբերում է սոցիալական ուղղվածության բիզնես: Ոչ միայն այն փաստով, որ իր գործունեությունը տարածում է նաեւ մարզերում, այլեւ սպասարկման ոլորտի առանձնահատկություններով նպաստում ազգաբնակչության լայն խավերին օգտվելու բազմաթիվ ակցիաներից, որոնք տարբերական բնույթ են կրում: Երկրորդ հանգամանքը՝ անկախ ճգնաժամի հետեւանքներից, անկախ տնտեսական աճի տեմպերից, «Իդեալ համակարգը» շարունակում է իր վստահ աշխատանքը», ասաց Արդյունաբերողների ու գործարարների միության նախագահ **Արսեն Ղազարյանը**:

«Իդեալ համակարգ»-ն առանձնանում է շահավետ ակցիաների կազմակերպմամբ՝ ընձեռելով սպառողներին կատարել խնայողություններ: Ջեռուցման ոլորտում մինչեւ ապրիլի 30-ը կգործի «500 խորանարդ/մետր գազ նվեր» ակցիան, համաձայն որի «Իդեալ համակարգ»-ի խանութ սրահներից ձեռք բերելով ջեռուցման համակարգեր՝ սպառողները կստանան նվեր 500 խմ գազ, 20 տոկոս զեղչ եւ անվճար տեղադրում: Կազմակերպության առանձնահատկություններից է բարձր որակավորում ունեցող անձնակազմը, որը հաճախորդին կօգնի ապրանքների եւ ծառայությունների բազմազանության մեջ կատարել ճիշտ ընտրություն՝ գտնել յուրօրինակ ոճն ու ընդգծել անհատականությունը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Աբովյան-Երեւան

# Հայաստանում կա 100 անչափահաս դատապարտյալ. նրանցից 7-ը՝ աղջիկներ




**2010 թ.-ին Հայաստանում հանցագործություն է կատարել 452 անչափահաս: Արդարադատության նախարարության (ԱՆ) Քրեակատարողական հիմնարկների (ՔԿՀ) վարչության Այլընտրանքային պատիժների կատարման բաժնում հաշվառված է 100 անչափահաս դատապարտյալ. դրանցից 7-ը աղջիկներ են: Հանցագործությունների թվում գերակշռում են գողությունը, խուլիգանությունը, կողոպուտի դեպքերը, դիտավորությամբ առողջությանը ծանր կամ միջին վնաս հասցնելը:**

**2007-2010 թվականների ընթացքում 8 անչափահաս է դատապարտվել թմրամիջոց կամ հոգեմետ նյութ ապօրինի իրացնելու համար: 2009-ին 1 անչափահաս է դատապարտվել սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու համար:**

**Անչափահաս դատապարտյալների տարիքը հիմնականում տատանվում է 16-18-ի սահմանում: 2009-ի համեմատ 73 անչափահաս է ազատվել պատժի հետագա կրումից:**

**«Անի պլազա» հյուրանոցում «Իրավախախտ անչափահասների կատարած հանցագործությունների կանխարգելմանը» նվիրված քննարկմանը ոստիկանության Վանաձորի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ռուդիկ Վարոսյանի ներկայացմամբ՝ վերականգնողական արդարադատության շրջանակներում իրավախախտ անչափահասները որպես պատժի փոխհատուցում պետք է ներողամտություն հայցող բովանդակությամբ շարադրություններ գրեն, մարդասիրական արարքներ կատարեն: Վանաձորում Հրանտ Մաթեւոսյանի արձանը ներկած ու փչացրած անչափահասին «պատժել» են՝ ստիպելով կարդալ Հրանտ Մաթեւոսյանի բոլոր պատմվածքները, գրել շարադրություններ, այցելել բրուտագործական արհեստանոց ու քանդակագործի հետ մասնակցել գրողի արձանի մակետի պատրաստման աշխատանքներին: Վարոսյանը համոզված է՝ անչափահասի ներքին աշխարհն է փոխվել. բացառվում է, որ նա հետագայում խուլիգանական որեւէ արարք կատարի: Վարոսյանը նշում է, որ անչափահասի հանցագործ դառնալու հիմնական մեղավորը ծնողն է, երբ զլանում է հետեւել երեխային, զերծ պահել չար նկրտումներից, հեռացնել վատ շրջապատի ազդեցությունից կամ լուծել նրա զբաղվածության հարցը: Դրանով նա անչափահասին մոտեցնում է մի եզրագծի, որից հետո դեռահասը կարող է դիմել հանցագործության:**

**Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների վարչությունում էլ համոզված են. երեխան հանցագործության է դիմում սոցիալական վատ պայմաններից դրդված: Դրանում ԱՆ ՔԿՀ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի պետի տեղակալ Լեւոն Ավետիսյանը համոզվել է՝ այցելելով իրավախախտ անչափահասների ընտանիքներ:**

**ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Նելլի Դուրյանն էլ հակադրվում է.**

**«Կան սոցիալապես վատ պայմաններում ապրող ընտանիքներ, որոնց երեխաները որեւէ հանցագործության չեն դիմում»: Դուրյանը համոզված է, որ գոյություն ունի երկու պայման՝ ընտանիքն ու անչափահասի զբաղվածության հարցի լուծումը. եւ դեռահասը չի դիմի հանցագործության:**

**Լեւոն Ավետիսյանի ներկայացմամբ՝ անչափահաս դատապարտյալների համար պարբերաբար կազմակերպում են այցելություններ մշակութային օջախներ: Դա օգնում է, որպեսզի դեռահասի մտածելակերպն ու աշխարհայացքը փոխվի:**

**Նելլի Դուրյանն էլ առաջարկում է 14-18 տարեկան անչափահասների համար, որոնք այսպես կոչված դաստիարակության պրոբլեմներ ունեն, ստեղծել հատուկ հիմնարկ, որտեղ նրանց նկատմամբ կդրսեւորվի հատուկ մոտեցում:**

Հ. Հ.

# «Պոլիմեր տրուբ» գործարանում երեկ հրդեհ էր բռնկվել

Արմավիրի մարզում երեկ առավոտյան, մոտավորապես ժամը 06:00-ի սահմաններում հրդեհ է բռնկվել Մերձավան գյուղում գտնվող «Պոլիմեր տրուբ» գործարանում, ուր, ի դեպ, երեկ այցելել էր Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Դեպքի վայր մեկնած արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության հրշեջ մի քանի խմբերին հաջողվել է ժամը 07:40-ի սահմաններում հրդեհը մարել: Հրդեհի պատճառները պարզվում են: «Պոլիմեր տրուբ»-ը մեր տարածաշրջանում մեծ պահանջարկ ունեցող խոշոր տրամաչափի խողովակներ արտադրող է, որոնք կիրառվում են հիդրոէներգետիկայում, ոռոգման համակարգում եւ այլուր:

Մ.Խ.

# Բջջային հեռուստատեսության առավել հարմար պայմաններ

Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, «Բջջային հեռուստատեսություն» ծառայության շրջանակներում «Basic» փաթեթն ընկերությունից կարելի է ձեռք բերել նաեւ 7 կամ 30 օրով, ինչը կարժենա համապատասխանաբար 500 կամ 1000 դրամ: Իսկ 1 օրով ձեռք բերելու դեպքում «Basic» փաթեթի արժեքը նախկին 400 դրամի փոխարեն կկազմի ընդամենը 100 դրամ:

Ա. Մ.

# Սիրիահայ համայնքի գոյությունը՝ վտանգված

*Սիրիահայերը համոզված են, որ համայնքի հետագա գործունեության միակ երաշխիքը Բաշար ալ Ասադն է*



Վահան Տեր-Ղեւոնդյան



Դավիթ Հովհաննիսյան



Գեւորգ Յազըճյան

«Ազատագրում սեփական բռնապետներից», «Պայքար հանուն ժողովրդավարության»:

Այսպես է անվանում արաբական աշխարհում եւ մասնավորապես Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունները Լիբանանում ՀՀ նախկին դեսպան **Վահան Տեր-Ղեւոնդյանը**: «Եվրոպացիների գնահատմամբ՝ ժողովրդավար կարող են լինել միայն իրենք: Նրանց համար անհասկանալի է ու զարմանալի, որ թունիսցին, եգիպտացին, սիրիացին, հայը նույնպես կարող են ձգտել ժողովրդավարության», ասում է Տեր-Ղեւոնդյանը՝ հավելելով, որ եվրոպական հանրությանը ձեռնտու է, որ նման երկրներում լինի բռնապետություն. երկրում լինի համեմատաբար կայուն վիճակ, բռնապետն էլ լավ հարաբերություններ ունենա իրենց հետ:

«Սակայն վերոնշյալ մոտեցումն իրեն սպառել է», ասում է նախկին դեսպանը:

Տեր-Ղեւոնդյանը չի հավատում այսպես կոչված «դավադրական տեսությանը», թե արաբական աշխարհում կատարվող իրադարձությունները Արեւմուտքի նախագծի արդյունք են:

«Պարզ է, որ այդ խոշոր տերությունները իրենց ազդեցությունն ունեն եւ պետք է փորձեն շահեր հետապնդել, սակայն կատարվածը բացատրել, թե Կենտրոնական հետախուզական վարչությունում (ԿՀՎ) ծրագիր են գրել, եւ դրա հետեւանքը հեղափոխական շարժումներն են՝ միամտություն է»:

Նրա մեկնաբանությամբ՝ Մերձավոր Արեւելքի բոլոր երկրներում, այդ թվում նաեւ Սիրիայում, սոցիալական գործոնն իր դերն ու նշանակությունն ունի, սակայն դա առաջատար խնդիր չէ: «Գլխավոր խնդիրը ժողովրդավարության հաստատումն է»:

Հաստատելով այս տեսությունը՝ Վահան Տեր-Ղեւոնդյանն ուշադրություն է հրավիրում այն փաստին, որ միապետություններում՝ Մարոկկո, Բահրեյն, Հորդանան, նույնպես սկսվել են բողոքի ցույցեր, սակայն հիմնական պահանջը ոչ թե վարչակարգի տապալումն է, այլ՝ կառավարության կազմի փոփոխությունը: «Միապետները ավանդույթի եւ արյան իրավունքով են երկիրը թագավորում: Դա ժողովրդի համար հասկանալի եւ ընդունելի է: Սակայն երբ երկրում հանրապետություն է, եւ մեկը սահմանադրության համաձայն ընտրվում է նախագահ, այնուհետեւ սահմանադրությունը հարմարեցնում իրեն եւ 30-40 տարի նստելով աթոռին՝ հետո էլ այն փոխանցում որդուն, սա անընդունելի է ժողովրդի համար», ասում է Տեր-Ղեւոնդյանը:

Սիրիայում արդեն 40 տարի իշխում է Ասադների ընտանիքը: Հաֆեզ ալ Ասադը Սիրիան ղեկավարել է ավելի քան 30 տարի, որից՝ Բաշար ալ Ասադը՝ 11 տարի: Սակայն մինչ «գահը» որդուն փոխանցելը փոփոխության ենթարկվեց Սիրիայի սահմանադրությունը, որն արգելում էր 40 տարեկանը չլրացած անձին ընտրվել նախագահ:

«Նիշը սարքեցին 34 տարեկան՝ հարմարեցնելով Բաշար Ասադին: Կարծես սահմանադրությունը հագուստ լիներ, որ հարմարեցվեց կրողին: Բացի դրանից, Սիրիայում, համաձայն սահմանադրության, չկա սահմանափակում, թե նախագահը քանի անգամ կարող է վերընտրվել նույն պաշտոնին: Սիրիան փակ երկիր է: Այնտեղ վերահսկվում է ամեն ինչ: Որեւէ հավաքույթ հնարավոր չէ կազմակերպել, եթե պետական մարմինների համապատասխան համաձայնությունը չեն ստանում: Ինտերնետը հսկողության տակ է, գործում է գրաքննություն», ասում է Տեր-Ղեւոնդյանը:

Լիբանանում ՀՀ նախկին դեսպանը հավելում է, որ եկել է պահը, երբ հասարակությունը ցանկանում է թոթափել բռնապետական կարգերն ու ապրել ազատ հասարակությունում:

Մեկնաբանելով Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունները՝ Սիրիայում ՀՀ նախկին դեսպան **Դավիթ Հովհաննիսյանը** երեք կարեւորագույն գործընթաց է առանձնացնում:

«Առաջինը իսլամական արմատական շարժման ակտիվացումն է: Ալավիական վերնախավում վաղուց ի վեր գոյություն ունեցող տարաձայնությունները ու ժողովրդավարական լայն զանգվածների, հատկապես ուսանողության ակտիվացումը: Եթե նախորդ երկու գործընթացի հետ կապված կարող էինք ենթադրել, որ Սիրիայի իշխանությունները կկարողանան ընդդիմադիրների առաջն առնել, ապա վերջին ակտիվացումները ցույց են տալիս, որ Սիրիայի իշխանությունների գործողությունները լուրջ բարդությունների են բախվում: Սա դառնում է վտանգավոր», ասում է Դավիթ Հովհաննիսյանը:

Նրա գնահատմամբ՝ Բաշար ալ Ասադի վարչակազմն ամուր է եւ գործիքներ ունի երկրի վերահսկողությունը պահելու համար:

«Եթե, իհարկե, չլինեն տարբեր տիպի արտաքին ազդեցությունները: Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունների վրա անշուշտ ազդում է ԱՄՆ-ն, որոշակի ներգրավվածություն ունի Ֆրանսիան: Իրանի եւ Թուրքիայի գործոնն էլ չի կարելի անուշադրության մատնել», ասում է նա:

Ասադի վերջին նախաձեռնությունը՝ 1963-ից ի վեր գոյություն ունեցող արտակարգ իրավիճակի վերացումը, հասարակության բորբոքված կրքերը հանգստացնելու առումով ոչ մի արդյունք չտվեց: «Արտակարգ իրավիճակի հանումը բացասական արդյունք կտա, որովհետեւ երկրում, իրոք, արտակարգ վիճակ է, եւ այդ պայմաններում ռեժիմը փոխել՝ նշանակում է թուլացնել հսկողության հնարավորությունները», ասում է Դավիթ Հովհաննիսյանը:

«Արտակարգ իրավիճակը նախագահը վերացրեց, սակայն ճնշման տակ: Երբ ճնշում ես գործադրում, եւ ղեկավարը որեւէ քայլ է կատարում, որքան էլ այդ քայլը լինի դրական, միեւնույնն է, ճնշման տակ է եղել ու բացասական ազդեցություն է թողնում», հավելում է Վահան Տեր-Ղեւոնդյանը:

Դավիթ Հովհաննիսյանը մտահոգություն է հայտնում, որ հայ համայնքին դժվարին ժամանակներ են սպասում:

Երկրում հեղափոխությունից հետո թիրախը դառնում են ազգային փոքրամասնությունները: Ընդհանուր առմամբ, հեղափոխությունները միշտ էլ բացասական ազդեցություն են ունենում հայ համայնքի վրա: Պատմությունը բազմիցս ապացուցել է, որ յուրաքանչյուր հեղափոխությունից հետո տվյալ երկրում հայ համայնքի թիվը զգալիորեն կրճատվում է: Երբ 1956թ. Եգիպտոսում տեղի ունեցավ հեղափոխություն, եւ տապալվեց Եգիպտոսի թագավոր Ֆարուքի իշխանությունը, հայերի թիվը երկրում զգալիորեն կրճատվեց: Երբ 1975թ. Լիբանանում սկսվեց քաղաքացիական պատերազմը, հայ համայնքը չեզոք դիրքորոշում ուներ, սակայն դա չխանգարեց, որ Լիբանանում հայերի թիվը կրճատվի: Նմանատիպ իրավիճակ ստեղծվեց նաեւ Իրանում: 1979թ. տեղի ունեցած հեղափոխությունը ստիպեց, որ բազմաթիվ իրանահայեր լքեն երկրի սահմանները:

Սիրիահայ համայնքը կազմում է 70-80.000: Քաղաքական համակարգում սիրիահայությունը ներկայացված է մեկ պատգամավորով: Հայերը մասնակցում են նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: Պատմաբան **Գեւորգ Յազըճյանը** փաստում է, որ իշխող վերնախավը ազգային եւ կրոնական փոքրամասնությունների նկատմամբ վարում է մեղմ քաղաքականություն:

«Հայկական համայնքը Սիրիայում որոշակի ազատություն ունի: Գործում են մարզական, մշակութային, սկաուտական միություններ: Գործում է ավելի քան 30 վարժարան, եկեղեցիների նկատմամբ ոտնձգությունները բացառված են:

Հայությունը Սիրիայում գործող միակ համայնքն է, որի դպրոցներում դասավանդվում է ազգային լեզուն: Հայերենը թույլատրվում է դասավանդել որպես ծիսական լեզու շաբաթական 4 ժամ: Թույլատրվում է նաեւ 2 ժամ կրոն դասավանդել: Հետեւաբար տրամաբանական է հայ համայնքի ցանկությունը, որ երկրում կայուն վարչակարգը մնա: Իսկ դրա երաշխիքն այսօրվա դրությամբ Բաշար Ասադն է», ասում է Յազըճյանը՝ շարունակելով, որ վերջերս հայ համայնքը Հալեպում երթ էր կազմակերպել ի պաշտպանություն Ասադի վարչակազմի:

«Այսօր հայ համայնքի անվտանգությունը վտանգված չէ, բայց վաղը՝ այո, կարող է վտանգված լինել, որովհետեւ քաոսի ժամանակ խաժամուժը կսկսի թալանն, ու հարվածի տակ կհայտնվեն ազգային փոքրամասնությունները», ասում է Դավիթ Հովհաննիսյանը:

Վերոնշյալ դիտարկմանը համամիտ չէ Վահան Տեր-Ղեւոնդյանը: Նա նշում է, որ Սիրիայում պայքարը ծավալվում է ժողովրդավարության հաստատման համար, հետեւաբար չի կարելի միանշանակ ասել. Ասադի վարչակարգի տապալումից հետո կվատանա՞ փոքրամասնությունների իրավիճակը, թե ընդհակառակը՝ ծաղկում կապրի:

«Եթե կատարվեն ժողովրդավարական բարեփոխումներ, եթե իրական բազմակուսակցություն հաստատվի, եթե հնարավորություն ստեղծվի հասարակական կազմակերպություններ ստեղծելու, ապա հասարակության ներուժը նոր արտահայտման հնարավորություն կստանա: Հայ համայնքն էլ հնարավորություն կստանա տնտեսական ու մշակութային ոլորտում արտահայտվելու», ասում է Տեր-Ղեւոնդյանը:

Լիբանանում ՀՀ նախկին դեսպանն առաջարկում է իրերն իրենց անուններով կոչել. Հայերը վաղուց Սիրիայի լիարժեք քաղաքացիներ են, հետեւաբար կարող են եւ անհրաժեշտ է կարծիք հայտնել, թե ինչպիսի վարչակարգ են ցանկանում ունենալ:

«Փոքրամասնություն լինել չի նշանակում, որ պետք է իշխանությունների գովքը կատարես: Տարօրինակ չէ՞, որ Սիրիայի ողջ հայ համայնքը Ասադի կողմնակիցն է: Ինչպե՞ս կարող է 100.000 մարդ միեւնույն հարցի վերաբերյալ ունենալ նույն կարծիքը: 100.000 հոգով մեկ մարդու պես «այո» կամ «ոչ» ասելը գալիս է բռնապետական համակարգի պայմաններից: Ակնհայտ է, որ ինքնուրույն կարծիք չկա: Փոքրիկ հայ համայնքի մոդելի վրա էլ կարելի է պատկերացնել Սիրիայի բռնապետական կարգերը», ասում է նա:

Դրական գնահատելով փաստը, որ հայ համայնքն իր զորակցությունն է հայտնել Բաշար ալ Ասադին, Գեւորգ Յազըճյանն ընդգծում է, որ առաջանում են հակասություններ ազգային շահերի եւ դեմոկրատական հավելյալ ազատությունների միջեւ: «Սիրիայում մեծ է սուննի արմատականների ազդեցությունը հատկապես Հալեպի շրջանում: Նրանցից հատկապես յումպենացված զանգվածները չեն թաքցնում, որ վարչակարգի տապալումից հետո հայերի հետ համապատասխան ձեւով են վարվելու: Վտանգը միշտ էլ առկա է: Հետեւաբար հայերը շահագրգռված են իրավիճակի այսօրվա պահպանմամբ՝ բարեկարգումներ, բարենորոգումներ կատարելու պայմանով: Հայ համայնքը գիտակցում է, որ անհնար է 2010թ. շարունակել 70-ականների մեթոդներով, որ պետք է վերացվի գրաքննությունը, ձեւավորվի բազմակուսակցական համակարգ, սակայն դա պետք է արվի առանց արյան՝ չտապալելով Ասադի համակարգը: Այո, հայ համայնքի գոյությունը վտանգված է ու ամեն մի նոր բախում կարող է բացասական ազդեցություն ունենալ համայնքի հետագա գործունեության վրա»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐԴԸ ԵՎ ԿՐՈՆԸ

# Եվրոպան եւ քրիստոնեությունը

Երեկ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում **Գարեգին Բ Վեհափառը** ընդունեց Հայաստան ժամանած՝ Եվրախորհրդարանում Եվրոպական ժողովրդավարական կուսակցության խմբի փոխնախագահ Խայիմ Մայոր Օրեխային: Ինչպես տեղեկացնում են Մայր աթոռից, Վեհափառը նշել է, որ «արդի համաշխարհայնացման գործընթացները, տարբեր օտարամուտ երեւույթները խաթարում են հասարակության հոգեւոր առողջ ընկալումները եւ կյանքը, որ դարեր շարունակ խարսխված է եղել քրիստոնեական արժեքների վրա»: Գարեգին Երկրորդը ընդգծել է, որ միայն ամուր հոգեւորբարոյական արժեհամակարգերի ձեւավորմամբ հնարավոր կլինի հաղթահարել բոլոր մարտահրավերներն ու դժվարությունները: Օրեխան, իր հերթին, կարեւորել է «Եվրոպայում ավանդական արժեքների վերականգնման անհրաժեշտությունը» եւ նշել, որ քրիստոնեական եկեղեցիների հոգեւոր առաջնորդները մեծ դեր ունեն «Եվրոպայի կյանքում քրիստոնեական արժեքները վերստին ներկայացնելու գործում»:

Այս համատեքստում բավական հետաքրքրական ուսումնասիրություններ է ներկայացնում բրիտանական IPSOS հետազոտական կենտրոնը: Վերջինս աշխարհի 23 պետություններում՝ 18 հազար մարդկանց շրջանակում հարցումներ է անցկացրել, որոնցից միայն 51 տոկոսն է նշել, որ հավատում է Աստծո գոյությանը: Հարցվածների 17 տոկոսը նշել է, թե աթեիստ է, 18 տոկոսն էլ դեռ չի կողմնորոշվել՝ հավատա՞լ Աստծուն, թե՞ ոչ: Ներկայացնելով այս տվյալները «Ռոյթեր»-ին՝ IPSOS-ի ղեկավարը ընդգծել է, որ հավատացյալների թվով աշխարհի առաջատար երկրները մահմեդական Ինդոնեզիան եւ Թուրքիան են: 93 տոկոս ինդոնեզացիներն ու 91 տոկոս թուրքերը նշել են, որ հավատում են Աստծո գոյությանը: Քրիստոնյա պետություններից «ամենահավատացյալը», բրիտանական կենտրոնի տվյալներով, Բրազիլիան է. Աստծուն հավատում է բրազիլացիների 84 տոկոսը: «Քրիստոնեական ակումբ» որակված Եվրոպայում իրավիճակն այս առումով բավական ուշագրավ է: Արեւմտյան Եվրոպայի երկրները առաջատարներ են աթեիստների թվով: Ֆրանսիայում Աստծո գոյությանը հավատում է 39 տոկոսը, Բելգիայում՝ 34, Գերմանիայում՝ 31: Հետաքրքրական են նաեւ հարցումների մասնակիցներին տրված մեկ այլ հարցի արդյունքները: IPSOS-ի ներկայացրած տվյալներով՝ աշխարհի բնակչության 41 տոկոսը համոզված է, որ մարդն առաջացել է էվոլյուցիայի միջոցով, հարցվածների 28 տոկոսը կարծիք է հայտնել, որ մարդուն ստեղծել է Աստված, իսկ 31 տոկոսը նշել է, որ չի կողմնորոշվել այս հարցում: Մարդու՝ էվոլյուցիայի միջոցով առաջացած լինելու տեսությանը առավել շատ հավատում են կրկին Արեւմտյան Եվրոպայում, ինչպես նաեւ Չինաստանում եւ Ճապոնիայում:

Այս հարցումները, չնայած անցկացվել են ընդամենը 23 երկրներում եւ միայն 18 հազար մարդկանց մեջ, այնուամենայնիվ փաստում են, որ արդի հասարակությունը արժեքների վերաիմաստավորման կարիք ունի, եւ այստեղ, իրոք, անչափ կարեւոր կլինի ինչպես միջեկեղեցական, այնպես էլ միջկրոնական երկխոսությունը:

Հ. ԱՓՅԱՆ

# Որտե՞ղ է ճշմարտությունը

ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ BBC-ի հեռուստաընկերության ռուսական ծառայությանն օրերս տված հարցազրույցով ներքաղաքական դաշտում կրկին ակտիվացան ղարաբաղյան կարգավորման հարցի քննարկումները: Առիթը, մասնավորապես, առաջին նախագահի այն հավաստիացումն էր, թե 1997 թ. կողմերը բավականին մոտ էին ղարաբաղյան խնդրի կարգավորմանը: Թե ինչ պայմաններով էր նախատեսվում ձեռք բերել այդ կարգավորումը, 1998 թ. ակնհայտ էր բոլորի համար, ինչն էլ իշխանափոխության պատճառ դարձավ մեր երկրում: Սակայն այսօր՝ ավելի քան մեկ տասնամյակ անց, թերեւս հույսը դնելով ժամանակի՝ զգոնությունը բթացնող հատկության վրա, հնչում են հավաստիացումներ, որոնք կարող են ստեղծել տպավորություն, թե 1997-ին առաջարկված բանակցային սկզբունքներն առավելագույնն էին, ինչին կարող էր եւ կարող է հավակնել հայկական կողմը:

ՀԱԿ-ի արտաքին հարաբերությունների պատասխանատու Վլադիմիր Կարապետյանը «Հայկական ժամանակ»-ի «Ինչո՞ւ են խառնվել իրար» հոդվածում փորձում է այս պնդումը հիմնավորել՝ մեջբերելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ԼՂ կարգավորման «Փուլային տարբերակ» հայտնի փաստաթղթի հատվածներ (1997 թ. դեկտեմբերի 2): Վ. Կարապետյանի պնդմամբ, համաձայնագրի նախագծում «ոչ մի խոսք չկա Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասին», այնուհետեւ մեջ են բերվում փաստաթղթից որոշ դրույթներ՝ ընտրողաբար: Հնարավոր է, որ արտագրելիս հեղինակն ուշադրությունից դուրս է թողել համաձայնագրի նախագծի նախաբանը, որտեղ ուղղակիորեն հղում է կատարվում «ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822, 853, 874, 884 բանաձեւերի ամբողջական իրականացման» պահանջին: Հիշեցնենք, որ ՄԱԿ ԱԽ չորս բանաձեւերում էլ հստակորեն ամրագրվում են «Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը», հետեւաբար համաձայնագրում հղումն այս փաստաթղթերին արդեն կողմերին պարտավորեցնում է ընդունել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Ավելին, համաձայնագրի նախագիծը հղում է կատարում նաեւ ԵԱՀԿ 1994 թ. Բուդապեշտի գագաթնաժողովին, որի եզրափակիչ ակտում մասնավորապես նշվում է. «1. ...Նրանք (մասնակիցները) իրենց հավատարմությունը հայտնեցին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձեւերին եւ ողջունեցին Անվտանգության խորհրդի աջակցությամբ հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ԵԱՀԽ քաղաքական ջանքերը»:

Այնուհետեւ, համաձայնագրի նախագծով կողմերը պարտավորվում են հրաժարվել ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից եւ բոլոր վեճերը (նաեւ փաստաթղթի իրականացմանն առնչվող) կարգավորել խաղաղ ճանապարհով: Փաստաթղթով սահմանվում է հայկական ուժերի դուրսբերման կարգը. «Բ) 1) Հայաստանի ցանկացած ուժ, որը տեղաբաշխված է ՀՀ սահմաններից դուրս, բերվում է այդ սահմաններ»: Այսինքն՝ զինված ուժերը դուրս են բերվում ոչ միայն ԼՂԻՄ հարակից շրջաններից, այլեւ բուն Արցախից: Ձեւակերպումն առաջացնում է երկու խնդիր. նախ միջազգային փաստաթղթով արձանագրվում է հայկական ուժերի առկայությունը ԼՂԻՄ եւ նրա հարակից տարածքներում, մյուս կողմից այդ ուժերի փաստացի դուրսբերումն ամբողջովին անպաշտպան էր դարձնում Արցախը:

«V. Կողմերն օժանդակում են տեղահանված անձանց անվտանգ եւ ինքնակամ վերադարձին իրենց նախկին մշտական բնակության վայրեր...

VI. Ուժերի դուրսբերմանը զուգահեռ կողմերն անմիջապես միջոցներ են իրականացնում ճանապարհների, երկաթուղիների ... բացման նպատակով...

XI. Սույն Համաձայնագրի երեք կողմերը, այսպիսով վերջ դնելով հակամարտության պատերազմական փուլին, համաձայն են Մինսկի համաժողովի համանախագահների օժանդակությամբ բարեխղճորեն շարունակել վարել բանակցություններ ԵԱՀԿ գործող նախագահի կողմից համապատասխանաբար հրավիրված այլ կողմերի հետ հակամարտության մյուս բոլոր կողմերի անհետաձգելի համընդգրկուն կարգավորմանը հասնելու նպատակով, ներառյալ քաղաքական կողմը, ինչը ներառում է ԼՂ կարգավիճակի որոշումը եւ Լաչինի, Շուշիի եւ Շահումյանի հետ կապված խնդիրների լուծումը...»: Փաստորեն՝ ԼՂ կարգավիճակի հստակեցման պարագայում անգամ Շուշիի, Շահումյանի եւ Լաչինի խնդիրներն առանձին դիտարկման առարկա են համարվում, այսինքն՝ անկախ ԼՂ վերջնական կարգավիճակից, հնարավոր է, որ Շուշին եւ Լաչինը բոլորովին այլ կարգավիճակ ձեռք բերեին:

Սակայն մինչեւ Լաչինի եւ Շուշիի խնդիրների հստակեցման մասին խոսելը, համաձայնագիրն ինքնին խնդրահարույց մի շարք դրույթներ է պարունակում.

Փաստորեն նշված փաստաթղթով հայկական կողմն անվերապահ եւ առանց որեւէ երաշխիքի հանձնում էր Արցախի շրջակա բոլոր տարածքները:

Հայկական ուժերը դուրս էին բերվում ԼՂՀ ողջ տարածքից:

Արցախը պարտավորվում էր ընդունել պատերազմի հետեւանքով հեռացած բոլոր փախստականներին:

Հայկական կողմերը բացում էին հաղորդակցության եւ կապի ուղիները հակառակորդի հետ:

Մեկ անգամ եւս ընդգծենք, որ կարգավորման այս տարբերակը կոչվում էր «փուլային»: Հետեւաբար՝ կարգավորման նշված փուլում հայկական կողմը գնում էր վերը նշված զիջումներին, ինչի արդյունքում միջազգային հանրությունը ստանում էր Հարավային Կովկասում տարանցման բաց ուղիներ, Ադրբեջանը՝ ԼՂԻՄ հարակից տարածքների հանդեպ վերահսկողություն, ադրբեջանցի փախստականներին եւ ոչ միայն փախստականներին վերաբնակեցնելու, բանակցություններն անորոշ ժամկետով ձգձգելու, Շուշիի եւ Լաչինի նկատմամբ ուղղակի վերահսկողություն հաստատելու հնարավորություն: Այսինքն, հայկական կողմը գնում էր կոնկրետ զիջումների՝ ոչ միայն փոխարենը ոչինչ չստանալով, այլեւ Ադրբեջանին հնարավորություն տալով անորոշ ժամկետով ձգձգելու բանակցությունները, ԼՂ կարգավիճակի սահմանման կոնկրետ մեխանիզմների բացակայության պայմաններում, ժամանակի ընթացքում վերականգնելու իր փաստացի ինքնիշխանությունը ԼՂՀ նկատմամբ:

Առաջանում է հարց. իսկ ի՞նչ փոխվեց, երբ համաձայնագիրն այդպես էլ ուժի մեջ չմտավ, եւ Ադրբեջանը չստանձնեց վերը նշված պարտավորությունը: Այսպես թե այնպես Ադրբեջանը շարունակեց բանակցել ղարաբաղյան կարգավորման, այդ թվում՝ ԼՂ կարգավիճակի խնդրի շուրջը:

Ուստի ակնհայտ է, որ մինչ այժմ քննարկման առարկա դարձած ղարաբաղյան կարգավորման բանակցային փաթեթներից եւ ոչ մեկում Արցախի ժողովրդի՝ իրավական պարտադիր ուժ ունեցող կամարտահայտության արդյունքը չի սահմանվել վճռորոշ ԼՂ կարգավիճակի ամրագրման հարցում, ինչպես դա արվում է Մադրիդյան սկզբունքներում: Ավելին, բանակցային ողջ գործընթացում Ադրբեջանը երբեւէ չէր միացել Արցախի ժողովրդի՝ ինքնորոշման իրավունքը ճանաչող որեւէ փաստաթղթի, ինչպես դա արեց ԵԱՀԿ Աստանայի գագաթնաժողովի (2010 թ. դեկտեմբեր) հնգակողմ հայտարարությունում, ԵԱՀԿ նախարարական հանդիպման 2009 թ. Աթենքի եզրափակիչ փաստաթղթի:

Կարելի է երկար վիճել, թե ով ինչ ներդրում ունի ղարաբաղյան հակամարտության ինչպես պատերազմական փուլի, այնպես էլ կարգավորման բանակցային գործընթացում... Սակայն այժմ, թերեւս, էականը դա չէ: Ակնհայտ է, որ շուրջ մեկ եւ կես տասնամյակ շարունակվող բանակցությունները երբեւէ բեկումնային չեն եղել: Այն, ինչ ունենք այսօր համազգային այս խնդրին վերաբերող միջազգային ընկալման հարցում, տարիների աշխատանքի արդյունք է: Եվ եթե այսօր խնդիրը համազգային շահերի հետապնդումն է, ինչպես հակառակորդի հետ պայքարում, այնպես էլ միջազգային ասպարեզում, գուցե ժամանակն է գիտակցելու, որ Արցախն ու ղարաբաղյան կարգավորումը ոչ թե հասարակական տարբեր շրջանակների միմյանց հակադրելու, այլ ձեռքբերումները ճիշտ գնահատելու եւ համատեղ ջանքերով դրանք շարունակական դարձնելու առիթ կարող են լինել:

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՍԵՆՅԱՆ

# Պարզություն է մտցվել Օբամայի ծննդավայրի հարցում

**ԱՄՆ նախագահի վարչակազմը ներկայացրել է Բարաք Օբամայի ծննդյան վկայականի ամբողջական պատճենը: Փաստաթուղթը վկայում է, որ նա ծնվել է Հավայան կղզիներում: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Օբաման իր ծննդյան վկայականը հրապարակելու որոշում է ընդունել իր ընդդիմախոսների բազմաթիվ հայտարարությունների կապակցությամբ, որոնց համաձայն ինքը ծնվել է արտերկրում: Այսպես կոչված «բըրթերները» (birth- «ծնունդ» բառից) պնդում էին, թե նախագահը «ծննդով» ամերիկացի չէ: Այս լուրերը տարածվում էին արդեն 2008-ի նախագահական ընտրություններից առաջ: «Բըրթերները» ենթադրում էին, որ Օբաման ծնվել է Քենիայում, Մեծ Բրիտանիայում կամ Ինդոնեզիայում: Օբամայի նախընտրական շտաբը այն ժամանակ ներկայացրել էր նրա ծննդյան վկայականի «համառոտ» տարբերակը: Երեք տարի անց Օբաման ի վերջո որոշեց հրապարակել փաստաթղթի ամբողջական պատճենը:**

**Օբամայի ծագման հարցում կասկածներ ունի մասնավորապես Հանրապետական կուսակցությունից նախագահության հավանական թեկնածու, հայտնի գործարար Դոնալդ Թրամպը: Ամբողջական պատճենի հրապարակումից հետո նա հայտարարել է, որ անհրաժեշտ է ստուգել դրա իսկությունը:**

**Փաստաթղթում նշվում է, որ Բարաք Օբաման ծնվել է 1961 թ. օգոստոսի 4-ին Հոնոլուլու քաղաքում (Հավայներ): Փաստաթուղթը ներկայացնելով՝ Սպիտակ տան մամլո քարտուղար Ջեյ Քարնին ասել է, որ նախագահը սեփական ծննդավայրի նկատմամբ ցուցաբերված մեծ ուշադրությունը վնասակար է համարում երկրի եւ քաղաքական զարգացումների համար:**

**ԱՄՆ սահմանադրության համաձայն, արտերկրում ծնված անձը չի կարող դառնալ երկրի նախագահ:**

ԸՍՏ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ

# «Գարդիան». Իրանի խորհրդարանում պատրաստվում են Ահմադինեժադի պաշտոնանկությանը



**Բրիտանական «Գարդիան» թերթի տեղեկությունների համաձայն, Իրանի խորհրդարանում սկսվել է երկրի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի պաշտոնանկության արարողակարգի նախապատրաստությունը: Պատգամավորները պետության ղեկավարի պաշտոնանկության մասին մտածում են գերագույն հոգեւոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեիի հետ նրա տարաձայնությունների պատճառով, կարծում է թերթը:**

**Ահմադինեժադ-Խամենեի հարաբերությունների վատացման վերջին վկայությունը դարձավ հետախուզության գործերի նախարար Հեյդար Մոսլեհիին պաշտոնաթող անելու նախագահի անհաջող փորձը: Ահմադինեժադի պահանջով նախարարն ապրիլի 17-ին համապատասխան դիմում գրեց, բայց Խամենեիի որոշմամբ վերականգնվեց պաշտոնում:**

**Նախագահը եւ գերագույն հոգեւոր առաջնորդը անցյալում եւս ունեցել են տարաձայնություններ: Մասնավորապես 2009-ի հուլիսին Ալի Խամենեին հեռացրել էր առաջին փոխնախագահ Էսֆանդիար Ռահիմ Մաշեիին: Ինքը՝ նախագահը իր տեղակալին հեռացնելու որոշման ընդունմանը չէր մասնակցել, իսկ հետագայում նրան նշանակել էր իր վարչակազմի ղեկավար: Թերթը նշում է, որ Մաշեիի դուստրը ամուսնացած է Ահմադինեժադի որդու հետ:**

**«Լոս Անջելես թայմսը» հաղորդում է, որ նախագահը 2011-ի ապրիլին անհայտ պատճառներով պաշտոնաթող է արել իր վարչակազմի ղեկավարին:**

**«Գարդիանը» տարաձայնությունների եւս մեկ վկայություն է համարում արտգործնախարար Մանուչեհր Մոթաքիի պաշտոնանկությունը: Ահմադինեժադը համապատասխան որոշում ընդունեց 2010-ի դեկտեմբերին՝ առանց գերագույն հոգեւոր առաջնորդի իմացության: Նոր արտգործնախարար դարձավ Ալի Աքբար Սալեհին՝ Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության նախկին ղեկավարը:**

**Բրիտանական թերթի տվյալներով, վերջին հակամարտության ժամանակ Ահմադինեժադը բացահայտորեն ցուցադրել է իր դժգոհությունը Խամենեիի որոշումից: Նա մասնավորապես հրաժարվել է հրապարակավ հավանություն տալ հետախուզության գործերի պաշտոնանկ նախարարի վերադարձին: Նաեւ հաղորդվում է, որ անցյալ ուրբաթ օրվանից Ահմադինեժադը չի երեւացել հանրության առջեւ:**

# «Ֆաթհ»-«Համաս» հաշտություն Եգիպտոսի միջնորդությամբ



**Պաղեստինյան «Ֆաթհ» եւ «Համաս» շարժումները համաձայնության են եկել ստեղծելու ազգային միասնության կառավարություն եւ որոշել են ընտրությունների անցկացման ժամկետները: «Ալ Ջազիրա» հեռուստաալիքը հաղորդում է, որ համաձայնությունը ձեռք է բերվել Եգիպտոսի հետախուզության պաշտոնյաների միջնորդությամբ: Կոնկրետ անուններ չեն հրապարակվում:**

**Ներպաղեստինյան հաշտության համաձայնագիրը ստորագրվելու է Կահիրեում մայիսի 4-ին: Այդ մասին Կահիրեի մամլո ասուլիսում հայտարարել է «Համաս» արմատական շարժման (կենտրոնը՝ Դամասկոս) քաղբյուրոյի ղեկավարի տեղակալ Մուսա Աբու Մարզուկը:**

**«Համասի եւ «Ֆաթհի» նախաստորագրած սկզբունքային հաշտության համաձայնագիրը կոչված է վերջ դնելու ներպաղեստինյան երկպառակությանը: Կողմերը մասնավորապես պայմանավորվել են ստեղծել ժամանակավոր անցումային կառավարություն:**

**Նաեւ նախնական որոշում է ընդունվել ուժային կառույցներ Անվտանգության բարձրագույն կոմիտեի մեջ միավորելու, ինչպես նաեւ Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը բարեփոխելու եւ բոլոր քաղբանտարկյալներին ազատ արձակելու շուրջը:**

**Աբու Մարզուկի խոսքերով, տեխնոկրատների նոր կառավարության ձեւավորումը սկսվելու է համաձայնագրի ստորագրումից հետո:**

**«Ֆաթհի» առաջնորդներից Ազզամ ալ Ահմեդը իր հերթին ասել է, որ «անկախների կառավարությունը» պետք է զբաղվի Պաղեստինի ազգային վարչակազմի նախագահի եւ պաղեստինյան խորհրդարանի ընտրությունների նախապատրաստությամբ:**

**Ենթադրվում է, որ ընտրություններն իրար կհաջորդեն 8 ամիս ընդմիջումով, իսկ Արաբական պետությունների լիգան կվերահսկի համաձայնագրի կատարումը:**

**2007-ին Գազայում «Համասի» իշխանության հաստատումից հետո Պաղեստինյան ինքնավարությունը պառակտվեց: Այսրհորդանանում շարունակվեց «Ֆաթհի» իշխանությունը Մահմուդ Աբբասի գլխավորությամբ, որն աշխարհում պաշտոնապես ճանաչված է որպես Պաղեստինյան ինքնավարության ղեկավար:**

ԳՅՈՒՄՐԻ

# Ասմունքի մանկապատանեկան երրորդ մրցույթ-փառատոնի մարզային երկրորդ փուլը մեկնարկեց Գյումրիից

### *Փառատոնն այս տարի նվիրված է Հովհաննես Շիրազի ծննդյան 95-ամյակին*



«Երանի թե ամեն հայ մարդ այնպես մտածեր իր երկրի, իր պետության, իր ժողովրդի մասին, ինչպես մտածում էր Շիրազը», ապրիլի 27-ին՝ բանաստեղծի ծննդյան օրը, նրա՝ Գյումրու տուն-թանգարանում մեկնարկած «Ասմունքի հանրապետական երրորդ մանկապատանեկան մրցույթ-փառատոնի մարզային երկրորդ փուլի բացման ժամանակ ասաց Երեւանի պետական համալսարանի հայ գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սամվել Մուրադյանը:** Նշելով նաեւ Շիրազ-բանաստեղծի այնքան մեծ ներգործությունը հայ սերունդների մտածողության ու հոգեբանության վրա, գրականագետը տեղին նկատեց, որ այսօր մեր հպարտության առարկա Հայոց պետական անկախության հիմքերը Հովհաննես Շիրազը սերունդների հոգիների մեջ դրել է խորհրդային դժվար ժամանակներում:

Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո, ՀՀ տարածքային կառավարման նախարարության եւ ԱԺ «Բաց դռներ» ծրագրի շրջանակներում Երեւանում, հանրապետության մարզերում, Արցախում ու Ջավախքում արդեն երրորդ տարին անցկացվող մրցույթ-փառատոնն այս տարի նվիրված է Շիրազին: Մինչ Գյումրիում մրցույթի մարզային երկրորդ փուլը սկսելը փառատոնի մասնակիցները, տեղի իշխանության ներկայացուցիչներն ու հանրապետական մրցութային հանձնախմբի անդամները Վարդան Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնի դիմացի հրապարակում ծաղիկներ դրեցին մեծանուն բանաստեղծի արձանին: Այնուհետեւ բոլորը շարժվեցին դեպի տուն-թանգարան, որտեղ էլ տրվեց մրցույթի երկրորդ փուլի մեկնարկը:

Ասմունքի հանրապետական մանկապատանեկան մրցույթ-փառատոնն անցկացվում է երկու՝ 11-14 եւ 15-17 տարիքային խմբերում: Մարզային առաջին փուլն անցկացվել է մարտ ամսին: Նախորդ փուլերում միայն Շիրակի մարզից մասնակիցների թիվն անցնում է 2500-ից: Նրանցից գյումրեցի 16 եւ գյուղական բնակավայրերի 30 շնորհալի պատանիներ եւ աղջիկներ հանդես էին գալիս այս փուլում: Մասնագիտական ժյուրիի ընտրած 6-7 լավագույնները մյուս մարզերից ընտրված իրենց հասակակից շնորհալիների հետ կստանան հանրապետական փուլում հանդես գալու իրավունք:

**Գ. Ս.**

# Երեւանյան միջազգային «Տանգո» փառատոնը շարունակվում է

Հայաստանի հանրապետության մշակույթի նախարարության աջակցությամբ անցած տարի ֆրանսիացի ակորդեոնահար Ռիչարդ Գալիանոյի եւ «Կադանս» անսամբլի համատեղ համերգով մեկնարկեց «Տանգո» փառատոնը Երեւանում: Փառատոնի շարունակությունը կկայանա ապրիլի 29-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Երեւանյան միջազգային «Տանգո» փառատոնի շրջանակներում կներկայացվի Ֆակունդո Ագուդինի (դիրիժոր), Մարսելո Նիսինմանի (բանդոնեոնահար) Արգենտինա, Արմեն Բաբախանյանի (դաշնակահար) եւ Շմավոն Գրիգորյանի (ֆագոտ) կատարումները՝ նվագակցությամբ Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի: Ծրագրում կհնչեն Շոպենի դաշնամուրի կոնցերտ N1, Վեբերի Հունգարական անդանտե եւ ռոնդո ֆագոտի եւ նվագախմբի համար՝ Հայաստանում առաջին կատարում, Պիացոլլայի օբլիվիոն եւ Գինաստեռայի չորս պար «Էստանսիա» ստեղծագործությունները: Իսկ ապրիլի 30-ին «Մեցցո» ակումբում «Կադանս» անսամբլի հետ հանդես կգա Մարսելո Նիսինմանը իր ստեղծագործությունների կատարումով, որոնք նոր ձեւ ու հեղափոխական ոճի են, տեղեկացրեց «Կադանս» երաժշտական կենտրոնի տնօրեն **Նիկա Բաբայանը**, երեկ հրավիրած մամուլի ասուլիսի ընթացքում:

Ասուլիսին բացի երաժիշտներից ներկա էր նաեւ ՀՀ-ում Արգենտինայի դեսպան **Միգել Անխել Կուներն**:

Դեսպանը շնորհակալություն հայտնեց մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանին, փառատոնին մասնակցող երաժիշտներին Հայաստան բերելու համար հոգածություն ցուցաբերելու խնդրում: «**Ազգի**» հարցին, թե հայ-արգենտինյան համագործակցության շրջանակներում ի՞նչ այլ ծրագրեր են նախատեսվում, դեսպանն ասաց. «Արգենտինայի արտաքին գործերի միջազգային առեւտրի եւ պաշտամունքի նախարարության աջակցությամբ սկսվում է Հայաստանում Արգենտինայի դեսպանության մշակութային գործունեությունը, որը մեր երկու երկրների միջեւ կնքված համագործակցության պայմանագրի առաջին քայլերն են: Դեսպանատունը բացի մշակույթից այլ ոլորտներում էլ պատրաստվում է գործունեություն ծավալել եւ երկու շաբաթ առաջ արդեն Հայաստանում ներկայացրեցինք «Արգենտինական գինու օր» ծրագիրը»:

Արգենտինացի դիրիժոր **Ֆակունդո Ագուդինը**, որը երեք անգամ եղել է Հայաստանում, նշեց, որ դեռ Արգենտինայից ծանոթ է հայերին ու հայկական մշակույթին, քանի որ հայերը Արգենտինայում ունեն յուրահատուկ ներկայություն: Նա տեղեկացրեց, որ 2007-ից որոշվել է իրենց «Կոլոն» թատրոնում բեմադրել «Անուշը», որին շատ-շատ հայեր պետք է մասնակցեն: Թատրոնը փակվել է վերանորոգման պատճառով, եւ օպերայի բեմադրությունը հետաձգվել է: «Հույս ունեմ, որ 2012 թվին կբեմադրվի Արգենտինայում (մեկ այլ թատրոնում): «Անուշը» մի տեսակ ֆանտաստիկ ու բացառիկ երաժշտական երեւույթ է, որտեղ կա եւ ազգայինը, եւ դասականը, եւ այնպիսի մի յուրահատուկ համադրում, որը կունենա մեծագույն հաջողություն Լատինական Ամերիկայում», նշեց դիրիժորը:



**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# ՀՀ սփյուռքի նախարարության եւ ՀԲԸՄ աջակցությամբ Հայաստանում կայացավ Ուրուգվայի «Կռունկ» համույթի առաջին համերգը



Ապրիլի 26-ին Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի «Առնո Բաբաջանյան» համերգասրահում կայացավ ՀՀ սփյուռքի նախարարության եւ ՀԲԸՄ երեւանյան գրասենյակի կազմակերպած Ուրուգվայի «Կռունկ» համույթի «Դեպի Հայրենիք» խորագրով համերգը: Ներկա էին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, գիտության եւ մշակույթի գործիչներ, բազմաթիվ սփյուռքահայեր:

1993 թ. հիմնադրված, 20-75 տարեկան 35 հոգուց բաղկացած երգչախումբը ղեկավարում է Ալվարո Հակոբյանը, որը նաեւ Մոնտեվիդեոյի ֆիլհարմոնիկ նվագախմբի ղեկավարն է: «Կռունկ»-ը ելույթներ է ունեցել տարբեր երկրներում, սակայն առաջին անգամ է համերգներով հանդես գալիս մայր հայրենիքում: Երգչախմբի հյուրախաղերը մաս են կազմում Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված միջոցառումների:

«Սիրով եւ ջերմությամբ ողջունում եմ Ուրուգվայից եկած մեր հայրենակիցներին: Մենք բոլորս սրտի տրոփյունով արտասանում ենք՝ «Կռունկ, ուստի կուգաս, կարոտ ենք ձայնիդ»: Շնորհակալ ենք «Կռունկ»-ին, որ կարողացել է պահպանել հայ արմատը, հայ ինքնությունը եւ հայ մշակույթը, որն արդյունք է Լատինական Ամերիկայի հայ համայնքների համախմբման, հայ ժողովրդի միասնության: Խորհրդանշական է, որ Ուրուգվայն առաջինն աշխարհում ճանաչեց եւ դատապարտեց Հայոց ցեղասպանության փաստը, որում մեծ դերակատարում ունի Ուրուգվայի հայ համայնքը: Երկար տարիներ երգչախումբը երգում է հայի եւ Հայաստանի մասին, իսկ նրանց սիրտը Հայրենիքում է»,- իր խոսքում նշեց նախարար **Հրանուշ Հակոբյանը**:

Շնորհակալություն հայտնելով խմբի բոլոր անդամներին եւ ղեկավար **Ալվարո Հակոբյանին**՝ հայ մշակույթի տարածման եւ զարգացման, հայապահպանության եւ ստեղծագործական բեղուն գործունեության համար, նախարար Հ.Հակոբյանը «Կռունկ» համույթին պարգեւատրեց ՀՀ սփյուռքի նախարարության պատվոգրով:

Նախարարը նշեց նաեւ, որ ՀՀ սփյուռքի նախարարությունը համահայկական կազմակերպությունների հետ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների անկախության 20-ամյակի կապակցությամբ նախատեսել է կազմակերպել 20 համերգ, որի բացումը փաստորեն կատարեց «Կռունկ» երգչախումբը: Ապրիլի 28-ին եւս մեկ համերգ տեղի կունենա Գյումրիի Արվեստների ակադեմիայի համերգասրահում:

Հայրենիքում իր առաջին համերգի ընթացքում համույթը կատարեց շուրջ երկու տասնյակ հայկական ժողովրդական եւ աշուղական երգեր (Կոմիտաս, Վ. Տիգրանյան, Ա. Հեքիմյան, Թ. Ալթունյան, գուսան Շերամ, գուսան Աշոտ, գուսան Շահեն եւ այլն): Հանդիսատեսի պահանջով եւ բուռն ծափողջյունների ներքո երգչախումբը ծրագրից դուրս կատարեց եւս մի քանի ստեղծագործություն: Առաջին հանդիպումից հուզված էին թե հանդիսատեսը եւ թե երգչախմբի անդամները:

**ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

# Հայ դպրության 500-ամյակին նվիրված հայերեն-պարսկերեն բառարանի շնորհանդես

**Երեկ Ազգային գրադարանում տեղի ունեցավ հայ դպրության 500-ամյակի առթիվ հրատարակված հայերեն-պարսկերեն բառարանի շնորհանդեսը: Իր տեսակի մեջ այս բառարանը առաջինն է Հայաստանում, պարունակում է շուրջ 20 000 բառ եւ արտահայտություն: Բառարանի հեղինակն է ՀՀ հանրային ռադիոյի արտասահմանի համար տրվող հաղորդումների պարսկերեն բաժնի ավագ խմբագիր Տիգրան Դավթյանը:**

**Իրանագիտությունը հայ իրականության մեջ հարուստ ավանդույթներ ունի: Դեռեւս Խորհրդային Միության տարիներին այն մեծ զարգացում է ապրել: Իսկ սփյուռքում՝ Թեհրանում, 1933թ. Նոր-Ջուղայեցի Տեր Գարեգին քահանա Կիրակոսյանը հրատարակել է պարսկերեն-հայերեն բառարան, որի նախաբանը գրել է հայ մեծանուն լեզվաբան Հր. Աճառյանը:**





**Ինչպես նշեց հեղինակը. «Մենք առաջին հերթին կանգ ենք առել հայերեն-պարսկերեն բառարանի կազմության վրա, քանի որ դրա պահանջարկն ավելի շատ է զգացվում Հայաստանի իրանագիտական շրջանակներում՝ ուսանողների, բանասերների, թարգմանիչների եւ գործարարների համար: Հայաստան-Իրան հարաբերությունների բազմակողմանի զարգացմանը զուգահեռ, մեզ անհրաժեշտ են գիտական եւ գրական կապերի ընդարձակում, պետական բազմալեզու քաղաքականության ծավալում եւ թարգմանչական եռանդուն գործունեություն: Ապագայի համար մենք նախատեսում ենք նոր հրատարակություններ եւ տեխնիկական նորագույն հնարավորությունների կիրառում»:**

**Շնորհանդեսին ներկա էր Հայաստանում Իրանի դեսպանի մշակույթի գծով խորհրդական՝ Շաքիրան, որ իր ջերմ խոսքերով ողջունեց հեղինակին, շնորհավորեց ներկաներին բառարանի հրատարակման առթիվ:**

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

# «Գրանդ սպորտ» մարզահամալիրը բացեց հյուրընկալ դռները

### ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցեց բացման արարողությանը

1-ին էջից


ՖՈՏՈԼՈՒՐ

Մարզահամալիրում կգործի FIBA-ի չափանիշներին համապատասխանող բասկետբոլի խաղահրապարակ, որտեղ կարող են անցկացվել նաեւ վոլեյբոլի եւ ֆուտզալի մրցումներ: Դահլիճում կա նաեւ ալպինիզմով զբաղվելու հնարավորություն: Ուժային մարզասարքերի դահլիճը համալրված է հատուկ «Գրանդ սպորտի» համար պատվիրված մարզագույքով:

Մարզահամալիրում կա ուժային մարզասարքերի եւս մեկ դահլիճ, որը նախատեսված է ընտանեկան այցելությունների համար: Մարզասարքերն աշխատում են օդով եւ անաղմուկ են: Կա երկու սքվոշ կորտ: Այս մարզաձեւը Հայաստանում առայժմ տարածում չունի: Արտերկրից հրավիրված մասնագետների ցուցումներով կառուցված այդ կորտերը միակն են հանրապետությունում: Բիլիարդի սրահում տեղադրված են ռուսական եւ ամերիկյան տեսակի սեղաններ: Ցանկացողները մարզահամալիրում կարող են զբաղվել նաեւ հրաձգությամբ, ծանրամարտով, լողով: 25 մետրանոց լողավազանը ջրու լողուղի ունի: Այն նախատեսված է նաեւ ակվաաէրոբիկայի համար: Գործում է նաեւ ծովափնյա վոլեյբոլի խաղահրապարակը, որի համար արտերկրից ներկրվել է ծովափնյա հատուկ ավազ:

Համալիրից օգտվողները հնարավորություն կունենան հաճելի ժամանց անցկացնել նաեւ բար-ռեստորաններում, ինչպես նաեւ շոգեհարվել շոգեբաղնիքում: Չեն անտեսվել նաեւ փոքր երեխաները: Մինչ ծնողները զբաղված կլինեն իրենց առողջության ամրապնդմամբ, երեխաներին մասնագետները կզբաղեցնեն տարբեր խաղերով:

Բնականաբար մարզահամալիրի ծառայությունները վճարովի են: Գործելու է գնային երկու սանդղակ: Մատչելի գներ կսահմանվեն ֆիքսված գրաֆիկով մարզական խմբակների համար: Իսկ անհատական մարզչով այցելուներն ավելի բարձր գին կվճարեն:

# Արտերկրում հանդես եկող հայազգի մարզիկները կհամալրեն ՀՀ հավաքականները

**Մարտեր առանց կանոնների Հայաստանի «Արմֆայթինգ» ֆեդերացիան 3 տարվա պայմանագիր է կնքել տարբեր երկրներում բնակվող հայազգի ուժեղագույն մարզիկների հետ, որոնք ընդգրկվելու են Հայաստանի հավաքականում ու այսուհետ հանդես են գալու հայկական եռագույնի ներքո: Այս մասին երեկ «Հենարան» ակումբում կազմակերպված մամուլի ասուլիսում տեղեկացրեց «Արմֆայթինգ» ֆեդերացիայի նախագահ <u>Հայկ Ղուկասյանը</u>: Ասուլիսին ներկա էին նաեւ Հոլանդիայից ժամանած մարտեր առանց կանոնների աշխարհի կրկնակի չեմպիոն <u>Հրաչո Դարբինյանը</u> եւ առաջատար մարզիկ <u>Դավիթ Խաչատրյանը</u>:**




**Հայկ Ղուկասյանը տեղեկացրեց, որ այս մարզաձեւում հայազգի մի շարք մարզիկներ ունենք ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Հոլանդիայում, Իտալիայում: Նրանցից ուժեղագույնների հետ արդեն պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանի հավաքականում ընդգրկվելու վերաբերյալ: Նրանց թվում է նաեւ Հոլանդիայում բնակվող Գեղարդ Մուսասին, որը հանդես է գալիս «Strikeforce» կազմակերպության մրցումներում՝ կրելով իր քաշային կարգում ուժեղագույնի տիտղոսը: Յուրաքանչյուր մրցամարտի համար նա մինչեւ 200 հազար դոլար պարգեւավճար է ստանում:**

**Ըստ Հայկ Ղուկասյանի, արտերկրում բնակվող հայ մարզիկների համար ՀՀ դրոշի ներքո հանդես գալը լավ հեռանկար է, քանի որ շատերն իրենց երկրներում հնարավորություն չունեն մասնակցելու մրցումների:**

**Այսօր Հայաստանի հավաքականներում ընդգրկված են մոտ 420 մարզիկներ, որոնց թվում կան նաեւ աղջիկներ: Նրանք նախկինում ձյուդոյիստուհիներ են եղել:**

**Մայիսի 6-ին Սիմֆերոպոլում Հայաստանի հավաքականը աշխարհի թիմային առաջնության վերջին փուլում կմրցի Ուկրաինայի հավաքականի հետ: Իսկ Դավիթ Խաչատրյանը Սիմֆերոպոլում աշխարհի չեմպիոնի կոչման համար կիսաեզրափակիչ գոտեմարտում մրցելու է ռուսաստանցի շատ ուժեղ մարզիկ Մագոմեդ Սադուլաեւի հետ: Եթե Դավիթին հաջողվի հաղթող ճանաչվել, ապա օգոստոսին աշխարհի չեմպիոնի տիտղոսը կվիճարկի իռլանդացի մարզիկի հետ:**

**Հայկ Ղուկասյանը շնորհակալություն հայտնեց ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանին եւ ռուսաստանցի գործարար Ռաֆայել Աբրահամյանին, որոնք ֆինանսապես աջակցում են Հայաստանի «Արմֆայթինգ» ֆեդերացիային: Հրաչո Դարբինյանն ու Դավիթ Խաչատրյանը նշեցին, որ իրենց համար մեծ պատիվ է Հայաստանի հավաքականում հանդես գալը: Նրանք խոստացան ներդնել բոլոր ուժերը Հայաստանի մարզական պատիվը բարձր պահելու համար:**

# Հաղթողը կորոշվի լրացուցիչ մրցախաղում

**Շախմատի ԱՄՆ-ի կանանց առաջնության եզրափակիչ մրցախաղի 2-րդ պարտիայում էլ Տաթեւ Աբրահամյանն ու Աննա Զատոնսկիխը հաշտություն կնքեցին: Այժմ չեմպիոնուհու հարցը կլուծվի արագ շախմատի լրացուցիչ 2 պարտիաներում: Եթե դրանք էլ չորոշեն չեմպիոնուհուն, ապա մրցակիցները կանցկացնեն վճռորոշ՝ 3-րդ պարտիան, որում ոչ-ոքի արդյունքի դեպքում հաղթանակը կշնորհվի սեւ խաղաքարերով խաղացող շախմատիստուհուն: Ընդ որում վերջինիս այդ պարտիայում ավելի քիչ ժամանակ կհատկացվի, քան սպիտակներով խաղացողին:Իսկ ահա 3-րդ տեղի համար մրցավեճի ելքն արդեն վճռված է: Իրինա Կրուշը 1,5-0,5 հաշվով պարտության մատնելով Քամիլա Բագինսկայտեին, դարձավ բրոնզե մեդալակիր:**

**Որոշվեց նաեւ տղամարդկանց առաջնության հաղթողը: Չեմպիոնի կոչումը նվաճեց Գատա Կամսկին, որն առաջին պարտիայում հաղթելով Յուրի Շուլմանին, երկրորդում հաշտություն կնքեց: Այնպես որ Կամսկին Կազանում շուտով մեկնարկող աշխարհի չեմպիոնի հավակնորդների մրցաշարում հանդես կգա ԱՄՆ-ի չեմպիոնի կարգավիճակով: Հիշեցնենք, որ քառորդ եզրափակիչում նրա մրցակիցը բուլղարացի գրոսմայստեր Վեսելին Թոփալովն է: 3-րդ տեղը գրավեց Սեմ Շենկլենդը, որը լրացուցիչ մրցախաղում հաղթեց Ռոբերտ Հեսին: Դասական շախմատի երկու պարտիաներն էլ ավարտվել էին ոչ-ոքի:**

# Յուրա Մովսիսյանը վերսկսել է մարզումները

**Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի եւ Կրասնոդարի համանուն թիմի հարձակվող Յուրա Մովսիսյանը վնասվածքից ապաքինվել է եւ արդեն վերսկսել է մարզումները: Նա վնասվածք էր ստացել մարտի 26-ին Երեւանում կայացած Հայաստան-Ռուսաստան մրցախաղում: Այդ խաղից հետո նա խաղադաշտ դուրս չի եկել:**

**Յուրա Մովսիսյանը շատ է ցանկանում շուտ վերադառնալ խաղադաշտ եւ օգնել ինչպես իր թիմակիցներին, այնպես էլ Հայաստանի հավաքականին, որը հունիսի 4-ին Սանկտ Պետերբուրգում Եվրո-2012-ի ընտրական մրցաշարի 6-րդ տուրում ուժերը չափելու է Ռուսաստանի ընտրանու հետ:**

# 10-ամյա պայմանագիր 1,5 տարեկան տղայի հետ

**Հոլանդիայի ֆուտբոլի առաջնության նախավերջին տեղում ընթացող «Վենլո» ակումբը խորհրդանշական 10-ամյա պայմանագիր է կնքել 1,5 տարեկան Բերկե վան դեր Մեյի հետ: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ երեխայի հայրը Youtube-ում տեղադրեց մի տեսահոլովակ, որում Բերկեն 3 անընդմեջ դիպուկ հարվածներով գնդակներն ուղարկում է արկղի մեջ: Այդ տեսահոլովակը մոտ մեկ մլն մարդ է դիտել: Երեխայի ընտանիքը «Վենլոյի» երկրպագուն է: Ժամանակին այդ ակումբում է խաղացել Բերկեի պապը:**

**Ակումբի մամուլի քարտուղարությունում նշել են, որ դեռեւս չեն որոշել, թե Բերկեն խաղային որ գծում հետագայում հանդես կգա: Սակայն արդեն զգացվում է, որ փոքրիկը հարվածի հիանալի տեխնիկայի է տիրապետում:**

ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ

# Մեսին «նվաճեց» Մադրիդը

Ընթացիկ մրցաշրջանում Մադրիդի «Ռեալն» ու «Բարսելոնը» 4-րդ անգամ մրցավեճի բռնվեցին, այս անգամ՝ չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչում: Դա թիմերի միջեւ ընդհանուր առմամբ 212-րդ սուպերկլասիկոն էր: Հիշեցնենք, որ ընթացիկ մրցաշրջանում առաջնության առաջին շրջանում «Բարսելոնը» ջախջախել էր «Ռեալին», 2-րդ շրջանի խաղում գրանցվել էր ոչ-ոքի, իսկ Իսպանիայի գավաթի եզրափակիչում հաջողությունն ուղեկցել էր «Ռեալին»:



Եվ ահա ֆուտբոլային նոր դիմակայությունում, որ կայացավ Մադրիդի «Սանտյագո Բեռնաբեու» մարզադաշտում, «Բարսելոնը» հաղթանակ տարավ Լիոնել Մեսիի խփած 2 հիասքանչ գոլերի շնորհիվ ու փաստորեն լուծեց եզրափակիչի ուղեգրի հարցը: Դժվար է հավատալ, որ մայիսի 3-ին Բարսելոնի «Կամպ նոու» մարզադաշտում «Ռեալի» ֆուտբոլիստներին կհաջողվի ռեւանշի հասնել ու եզրափակիչ դուրս գալ: Մանավանդ որ այդ խաղում Ժոզե Մոուրինյուն զրկված կլինի պահեստայինների նստարանից ղեկավարելու թիմի գործողությունները, քանի որ առաջին հանդիպման ժամանակ հեռացվել էր տեխնիկական գոտուց: Ի դեպ, նա շատ դժգոհ էր մրցավարությունից, որի մասին էլ խոսեց խաղից հետո:

**Ժոզե Մոուրինյու** («Ռեալ»)- Եթե ասեմ այն ամենը, ինչ մտածում եմ մրցավարության եւ ՈՒԵՖԱ-ի մասին, ապա կարիերաս կավարտվի: Սակայն հույս ունեմ ստանալ իմ հարցի պատասխանը, թե ինչո՞ւ Էվրեբեն, Բուզական եւ Շտարկը կիսաեզրափակիչ հանդիպումներում մտապես սխալներ են թույլ տալիս: Գուցե նրանք վախենո՞ւմ են ՈՒԵՖԱ-ից: Հարգում եմ Խոսեպ Գվարդիոլային: Նա հիանալի մարզիչ եւ անձնավորություն է: Սակայն կցանկանայի «Բարսելոնի» հաղթանակին ականատես լինել առանց սկանդալների: Այժմ ստիպված ենք Բարսելոն մեկնել առանց Պեպեի, որը ոչինչ չէր արել, ու Սերխիո Ռամոսի: Բացի այդ էլ, ես զրկված եմ տեխնիկական գոտում գտնվելու իրավունքից: Սակայն եթե նույնիսկ Բարսելոնում գոլ խփենք, ապա մրցավարները կրկին մեզ «կսպանեն»: Եզրափակիչ դուրս գալու մեր խնդիրն անլուծելի է: Այսօր հավասար պայքարում մրցավարն ապահովեց մրցակցի հաղթանակն ու հանգիստ տուն կգնա, քանի որ նա ոչ մեկի առջեւ հաշվետու չէ:

**Խոսեպ Գվարդիոլա** («Բարսելոն»)- Մենք հոյակապ խաղ անցկացրինք: Վերահսկում էինք մրցակցի գործողությունները, ավելի ագրեսիվ էինք գործում: Պետք է շնորհավորեմ սաներիս: «Ռեալի» պես թիմը երբեք չի հանձնվում: Մենք հարգանքով ենք վերաբերվում «Ռեալին»: Դեռեւս «Ուեմբլիի» ուղեգիր չենք նվաճել: Մեր բախտը բերել է, որ թիմում խաղում է Մեսին: 23 տարեկանում նա արդեն «Բարսելոնի» լավագույն ռմբարկուների ցանկում 3-րդ տեղում է ընթանում: Դա տպավորիչ է:

Առաջին խաղակեսում մենք «Ռեալին» թույլ չտվեցինք որեւէ գոլային պահ ստեղծել: Դա շատ դժվար է: Կարծում եմ, որ հաջորդ երեքշաբթի «Ռեալն» ավելի վտանգավոր կլինի:

Ի դեպ նշենք, որ Մեսին չեմպիոնների լիգայի ընթացիկ խաղարկությունում 11 գնդակով գլխավորում է լավագույն ռմբարկուների ցուցակը: Պայքարը շարունակող ֆուտբոլիստներից 6-ական գնդակ են խփել «Ռեալի» ֆուտբոլիստներ Քրիստիանու Ռոնալդուն եւ Քարիմ Բենզեման, 5 անգամ աչքի է ընկել «Շալկե-04-ի» իսպանացի հարձակվող Ռաուլը: Այնպես որ Մեսին արդեն ապահովել է լավագույն ռմբարկուի տիտղոսը:

# Աբրահամ-Ուորդ մենամարտի անցկացումը վտանգված է

Արթուր Աբրահամի եւ Անդրե Ուորդի մայիսի 14-ին ԱՄՆ-ում նախատեսված Super Six մրցաշարի կիսաեզրափակիչ մենամարտի անցկացումը վտանգված է: Հնարավոր է, որ մենամարտը չկայանա, քանի որ Կալիֆոռնիայի նահանգի հանձնախումբը որոշել է ռինգի մրցավարին եւ եզրային մրցավարներից մեկին նշանակել Կալիֆոռնիայից:

Արթուր Աբրահամի պրոմոութեր Վիլֆրիդ Զաուեռլանդը դա անթույլատրելի է համարում, քանի որ երկու ամիս առաջ մենամարտի մասնակիցները համաձայնվել էին, որ հանդիպումը սպասարկեն չեզոք մրցավարները: Ըստ նախնական պայմանավորվածության, մրցավարներից մեկը պետք է լիներ Կալիֆոռնիայից, մյուսը՝ Եվրոպայից, իսկ մյուս երկուսը՝ այլ մայրցամաքներից: Զաուեռլանդը նշել է, որ մինչեւ այդ հարցը չլուծվի, Արթուրը ԱՄՆ չի մեկնի:

*Հավելված N 1*
*ՀՀ արդարադատության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի*
*N 319-Ն հրամանի*

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

«Հայկական Ֆուտբոլի Զարգացման» Հիմնադրամի 2010 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Հայկական Ֆուտբոլի Զարգացման» Հիմնադրամ:
2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 17.12.04 թ., պետական գրանցման վկայական (03 Ա 066308):
3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երեւան, Խանջյան 27, հեռ. 54-18-76:
4. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ Ալեքսանդր Հարությունով:
5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝ հաշվետու ժամանակաշրջանում չեն օգտվել Հիմնադրամի միջոցներից:
6. Աշխատակազմը՝ չունի:
7. Իրականացված ծրագրեր՝ հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամի կողմից ծրագրեր չեն իրականացվել:
8. Ֆինանսավորման աղբյուրները՝ Ղազարյան Էդուարդ՝ 350 000 ՀՀ դրամ՝ նվիրաբերություն, Միրանյան Աշոտ՝ 20 000 ԱՄՆ դոլար՝ նվիրաբերություն:
9. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 555 700 (հինգ հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:
10. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝ 555 700 (հինգ հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:
11. Տարեկան հաշվետվությունը հաստատված է «Հայկական Ֆուտբոլի Զարգացման» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից՝

արձանագրություն թիվ 2 25.01.2011 թ.

***Տնօրեն՝*** ***Ալեքսանդր Հարությունով***

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

